

ՀՈՄՐՈՒԼԻ ՊԱՇՏՊԱՆԸ

658

ԱՇԽԱՏԱՆՈՒՐԵՑ

ՍՏԵՓԱՆ ԱԻԵՏԻՔԵԱՆ — ԲԱՆԱՆՑԵՑԻ

ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

ՅՈՎԱԿԻՄ ՊԱՊՈՎԱՆՑ

• (111) •

9(4)

Ա-79

ԾՈՍԿՈՒՄ

ՏՊԱՐԱՆ Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ

1899.

9(4)

Ա-79

ՀՈՄՐՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՆԸ

ԱՀԽԱՏԱՍԻՐԵՑ

ՍՏԵՓԱՆ ԱԽԵՏԻՔԵԱՆ—ԲԱՆԱՆՑԵՑԻ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՅՈՎԱԿԻՄ ՊԱՊՈՎԵԱՆՑ.

20 04

ՄՈՍԿՈՒԱ

Տ Պ Ա Ր Ա Ն Թ. Բ Ա Ր Խ Ո Ւ Դ Ա Ր Ե Ա Ն Ի
1899.

2012

(1548)

30365-42

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 30 Января 1898 года.



(4326
41)

13123-589

Типография Х. Бархударянъ, Москва, М. Златустовскій пер., д. Гиршъ.

ՀՈՄՐՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՆԸ

(Նուէր տիկին Մարիամ Դաւթեան Շալամեանցին)

I.

1800 թ. Իրլանդիան զրկվեց ինքնուրոյն պետական կազմակերպութիւնից ու վերջնականապէս միացաւ Անգլիայի Հետ։ Մինչև այդ ժամանակը նա ունէր իր սեփական պարլամենտը, որը գտնվում էր երկրի բարձր Հողատէր արխտօկրատիայի ձեռքում։ Այդ դասակարգը, օգտուելով իր գերիշխանութիւնից, դարերի ընթացքում ծծում էր իրլանդական հասարակ ժողովրդի արիւնը և ամեն կերպ աշխատում էր պահել նրան միշտ իրաւազուրկ զրութեան մէջ։ Հասարակ ժողովուրդն Իրլանդիայում պատկանում էր կաթօլիկ դաւանութեան, իսկ բարձր դասակարգը — բողոքական։ Վերջինն ատում ու հալածում էր կաթօլիկներին, ծանրաբեռնում էր նրանց հարկերով ու տնտեսապէս քայքայում էր նրանց։ Ժողովրդի տանջանքներն անվերջ էին ու անսպառ. փոքրաթիւ օրիգարիսիան, բարձր դասակարգը, իր ձեռքում ունենալով երկրի կառավարութեան ղեկը, չքաւորու-

Թեան ճանկերում խեղդում էր նրան, բայց նա, իր առջև ունենալով պատմութեան դասերը, հերոսաբար տանում էր այդ ծանր լուծը, յոյս ունենալով վաղուց օգտուել երկրի ինքնավարութիւնից, իր ձեռքը զրաւել պարլամենտը, ինչպէս այդ արին անդլիացիք վերջին դարերի ընթացքում: Իրլանդական ժողովուրդը, թէև տանջվում ու չարչարվում էր շնորհիւ իր բարձր դասակարգի ծայրահեղ անբարեխղճութեան, բայց մի բոլոր անգամ չէր մտածում օտարի դիրին ընկնել: Նա շատ թանկ էր գնահատում ազգային անկախութեան այն ուրուականը, որը մինչև 1800 թ. զոյութիւն ունէր Իրլանդիայում: Նա խորը համոզված էր, որ ներքին յառաջադիմութեան հոսանքը վաղուց իր ձանապարհը կըհարթի, տասն եութերորդ դարի ազատարար պաղափարներն իրանց յաղթանակը կըտանեն, օլիգարխիան կըխորտակվի, և երկրի ինքնավարութեան գլխաւոր մեքենան, պարլամենտը, կանցնի նրա ձեռքը: Այն ժամանակ նա կըտեսնի բաղդաւոր օրեր, կըլինի անկախ տէր իր երկրի, իր աշխատանքի ու նրա տուած տրդիւնքների: Ներքին առաջադիմութեան նշաններ տասնեութերորդ դարի վերջերում արդէն նշմարվում էին Իրլանդիայում: 1793 թ. ժողովրդի բուռն ազիտացիայի շնորհիւ իրլանդական պարլամենտը մի զիջում արաւ յատուկ օրէնքով կաթօլիկների մի մասին, թէև շատ փոքրաթիւ, շնորհիւ ընտրողական իրաւունք: Այդ յաղթութիւնը ժողովրդի մէջ ևս առաւել ամրացրեց այն համոզմունքը, որ պէտք է ամեն տեսակ զոհանքների կնթարկվելով, օրինաւոր ձանապարհով ու միջոցներով վաղուց զրաւել պարլամենտն ու

այլ պետական հիմնարկութիւնները, այլ ոչ թէ օտարից, Անգլիայից, փրկութիւն աղերսել: Բայց շուտով վրա հասաւ 1800 թ.: Անգլիան միացրեց իր հետ Իրլանդիան, ոչնչացրեց Դուբլինի պարլամենտը: Երկիրը զրկվեց ինքնավարութիւնից ու անկախութիւնից, իրլանդական ժողովրդի դարեւոր ձգտումներն անխնայ ոտնահարվեցին ու կաշկանդվեցին անխորտակելի շղթաներով:

Նոյաւոր օլիգարխիան, տեսնելով ժողովրդի առաջադիմական ձգտումները, հասկացաւ, թէ ապագայում ինչ վտանգ է սպառնում իրան, ուստի աւելի լաւ համարեց ծախել իրլանդական պարլամենտն Անգլիային, քան թէ թողնել, որ նա ապագայում զէնք լիային, քան թէ թողնել, որ նա ապագայում զէնք դառնայ հասարակ ժողովրդի ձեռքում: Երբ յարմար բոլորէր վրա հասաւ, Անգլիան բանակցութիւններ սկսեց օլիգարխիայի հետ, այդ բանակցութիւնները շատ երկար չտեւեցին, անգլիական կառավարութիւնը Դուբլինի պարլամենտի լորդերին ու պատգամաւորներին առաջարկեց տասն և հինգ միլլիօն բուբլի, և այդ գումարը բաւական եղաւ նրանց անպայման հաւատարմութիւնը ստանալու: Իրլանդիայի լորդերը բացի վերոյիշեալ միլլիօններից, ստացան նոր տիտղոսներ, չորս պաշտօններ Անգլիայում ու դարձան հաւատարիմ ծառաներ բրիտանական թագին: Ահա այդպիսի միջոցներով անգլիական կառավարութիւնը ստեղծեց Իրլանդիայի ու Անգլիայի միութեան դաշնադիրը, որի մասին Գլադստօնը 1886 թ. իր արտասանած ճառերից մինում ասաց հետեւեալ խօսքերը. «Ես պատմութեան էջերում չեմ գտնում դրանից աւելի քստմենքի խաբէութիւն»:

...

Բռնի միութիւնը Անգլիայի Հետ իրլանդական ժողովրդի սև օրերին աւելացրեց սև օրեր: Նրա կանոնաւոր Հասարակական զարգացումը կանգ առաւ սկզբում: Հարցերը հարցերի ետեւից ծագում էին, բայց մնում էին անվճիռ, կուտակվում էին միմեանց վրա ու երկրի կառավարութիւնը քառասական դրութեան մէջ դնում: Ժողովրդի կենսական պէտքերն առաջուան պէս մնում էին անբաւարար, խիստ կեանքը նորանոր պահանջներ էր դնում նրա առաջին: Անգլիական կառավարութիւնը մտածում էր միայն իրլանդացիներին սանձահարկելու մասին. նա ղորեղայնում էր Իրլանդիայում ազմիրիստարացիան, մեծացնում էր ղորքերի թիւը, ոստիկանական ցանցով քայլ առ քայլ պաշարում էր ամբողջ երկիրը, արտաքոյ կարգի լիազօրութիւններ էր տալիս այնտեղի իր նահանգապետներին: Այդ բոլոր միջոցների նպատակն էր—անպայման Հնազանդութեան մէջ պահել Իրլանդիան ու արմատախիլ անել իրլանդական ժողովրդի ձրգտումները: Անգլիական խստութիւններն սկսեցին խեղդել Իրլանդիան սկսած 1800 թ. դաշնագրի իրագործման օրից: Հրամանը Հրամանի ետեւից դուրս էր թռչում Լճնդօնից դէպի «Կանաչ կղզին», բայց իրլանդական ժողովուրդը չէր խեղդվում նրանց ծանրութեան տակ. նա Հերոսաբար տանում էր այդ անտանելի լուծը, չէր ընկճվում բոլորովին, խուլ կօիւ էր մղում նոր կարգերի դէմ. քիչ-քիչ նա բարձրաձէնում էր ու իր խրոխտ ձայնը լսիլի էր դարձնում

բրիտանական պարլամենտում, երբեմն դուրս խելով նրա ձեռքից այս կամ այն օրէնքը, այս կամ այն բարենորոգութիւնը: Վերջին դարու Իրլանդիայի պատմութեան միակ նիւթն է այդ Հերոսական կօիւր, իրլանդական ժողովրդի միահամուռ բողոքն ու անդուստ շարժումը, որոնց միջոցով միայն նա կարողացաւ ստիպել Անգլիային ուշք դարձնել իր դառն ցաւերի ու դարաւոր վէրքերի վրա: Անգլիայում անգամ սկսեցին լսվել 1800 թ. միութեան դաշնագրի դէմ բողոքող ձայներ, որոնք բացարձակապէս յայտնեցին, թէ միութեան դաշնագիրը մի ահագին քաղաքական սխալ է, որը վաղ ուշ պէտք է ուղղել: Բայց այդ ձայներն սկզբում դեռ Հատ ու կտոր էին. պարլամենտում, իսկ ևս առաւել պարլամենտից դուրս նրանց լսող չըկար: Անգլիացիների աչքում այդպիսի ձայն բարձրացնողները դաւաճաններ էին միայն:

...

Միութեան դաշնագրի մասին եղած բանակցութիւնների ժամանակ անգլիական կառավարութիւնը, որի ղեկը գտնվում էր այն ժամանակ Ուիլիամ Պիտտի ձեռքում, Իրլանդիայի կաթօլիկ ազգաբնակչութեան ընդդիմադրութիւնը թուլացնելու նպատակով յայտարարեց, որ միացեալ Անգլիայի ու Իրլանդիայի կառավարեալ առաջին օրէնսդրական ակտն է լինելու՝ շնորհում Իրլանդիայի ամբողջ կաթօլիկ ազգաբնակչութեան լայն Հասարակական ու քաղաքական իրաւունքների այն չափով, ինչ չափով այդ իրաւունքները գոյութիւն ունեն պետութեան միւս մասերում:

Երբ իրադործվեց միութեան դաշնագիրը, Պիտար լուրջ մտադրութիւն ցոյց տուեց շնորհել Իրլանդիայի կաթօլիկներին խոստացած իրաւունքները, բայց նրա ցանկութեանը զօրեղ ընդդիմադրութիւն ցոյց տուեց Գէորգ III Թագաւորը, որը լսել անգամ չէր ուզում այդ իրաւունքների մասին: Պիտան ստիպւած եղաւ հրաժարական տալ: Նրա անկումով կաթօլիկների քաղաքական իրաւունքների հարցն անորոշ ժամանակով յետաձգվեց, յուսահատ դրութեան մասնելով Իրլանդիայի կաթօլիկ ազդարնակութիւնը: Սակայն լաւ օրեր տեսնելուց նա իր յոյսը բոլորովին չըկտրեց. նա իրան նպատակ դրեց մօտիկ ապագայում դուրս խելէ անդլիական պարլամենտի ձեռքից խզճի ազատութիւն ու կրօնական հաւասարութիւն, որոնց միջոցով նա յոյս ունէր ազատվել իր ուսերը մաշող անտանելի լծից, հողատէր արիստօկրատիայի իր վրա ունեցած քաղաքական ու անտեսական իրաւունքներից:

Շուտով Իրլանդիայում առաջ եկաւ ահագին ժողովրդական շարժում, որը մինչև այն ժամանակ չըտեսնուիւմ ծաւալ ստացաւ, երբ նրա ղըւլխն անցաւ Դանիէլ Օ'Կոննէլը: Նա, շնորհիւ իր փայլուն հսկողորական տաղանդի, իր շուրջը ժողովեց Իրլանդիայի ամբողջ կաթօլիկ ազգարնակութիւնը, որի ղըւլխն անցած սկսեց քայլ առ քայլ առաջ ընթանալ դէպի ղըլխաւոր նպատակը: Իր գործունէութեան մէջ նա ապօրինի միջոցների չէր դիմում ու իր յարուցած ահագին ժողովրդական ազիտացիան խիստ օրինական շրջանակի մէջ էր պահում: զրա մէջ էր միայն տեսնում նա իր ոյժը, և շնորհիւ գործունէութեան

Թեան այդ եղանակի նա կարողացաւ տաանեակ տալիններ մնալ ապարէզի վրա ու հիմք դնել Իրլանդիայի ապագայ երջանկութեան:

XX.

1809 թ. Դուբլինում կազմակերպուեց «Կաթօլիկական կօմիտէտ», որի նպատակն էր երկրի զանազան կենտրօններում կազմել հասարակական ժողովներ (միաինգներ) կօմիտէտի առաջարկած հարցերը քննադատելու ու նրանց մասին խնդրագրիներ կազմելու պարլամենտին ներկայացնելու համար: Կօմիտէտն սկսեց գործել մեծ եռանդով. նրա հրաւերներն Իրլանդիայի բոլոր անկիւններում արձագանք դտան, և ցանկալի շարժումն իր ընթացքն ստացաւ: Կօմիտէտի գործունէութիւնը շուտով իր վրա դրուեց կառավարութեան ուշադրութիւնը, որի հրահանգով Իրլանդիայի ազմինխտրացիան խիստ միջոցներ ձեռք առաւ զոյութիւն ստացած շարժումն իր սաղմի մէջ խեղդելու: Մասամբ այդ նորան յաջողուեց. ժողովըրդական շարժման բուռն հոսանքը թուլացաւ: Սյգպէս շարունակվեց մինչև 1823 թ., երբ Օ'Կոննէլին յաջողվեց ժողովրդական շարժումն աւելի լայն հիմքերի վրա դնել շնորհիւ համերաշխութեան այն կապերի, որոնցով յաջողվեց նրան կապել ժողովուրդն ու ազգեցիկ կաթօլիկ հոգեորականութիւնը: Սյգ փոխադարձ համերաշխութեան պտուղն եղաւ «Կաթօլիկական միութիւն» անունով հսկայական ընկերութիւնը, որն իր բաղմաթիւ ճիւղերի ցանցով շուտով ծածկեց ամբողջ երկիրը: Նա գործում էր

մեծ եռանդով: Ժողովրդական շարժումը կրկին կենդանութիւն ստացաւ: Ամենաաղքատ զաւակարդն անգամ չէր խնայում իր կոպէկներն ընկերութեան նիւթական միջոցները զօրեղացնելու համար: Օ'հոննէլի ժողովրդականութիւնն օր օրի վրա մեծ ծաւալ էր ստանում: Նրա ճառերը լսելու էին հաւաքվում հազարաւոր ունկնդիրներ: «Կաթօլիկական միութեան» գործունէութիւնը բնականաբար դուր չեկաւ անգլիական կառավարութեան, որը վճռեց ամենաեռանդուն միջոցներ գործ դնել նրա դէմ: Կառավարութիւնը հէնց սկզբից կ'ոչնչացնէր այդ ընկերութիւնը, եթէ նրա գոյութիւնը հակառակ լինէր տիրապետող օրէնքներին, — խօսքի, մամուլի, հասարակական ժողովների ու ընկերութիւնների ազատութեան: Իր նպատակին հասնելու համար կառավարութիւնը դիմեց պարլամենտին, պահանջելով յատուկ օրէնք «Կաթօլիկական միութեան» դէմ: Նրա ներկայացրած օրէնագիծը փնտսակար էր համարում այդ ընկերութիւնը և պահանջում էր նրա մշտական խափանումն: Սյդ դէպքը պատահեց 1825 թ.: Պարլամենտն այդքան հեռու չըգնաց: Իբրեւ փորձնական միջոց նա լիազօրութիւն տուեց կառավարութեան փակել ընկերութիւնը երեք տարի ժամանակով, մինչև 1828 թ.: Եթէ այդ միջոցն ընդ միշտ վերջ գնէր ժողովրդական շարժման իրանդիայում, այն ժամանակ պարլամենտն այդ յատուկ օրէնքը կըղարձէր մշտական, և կառավարութիւնը, ի հարկէ, աւելի մեծ չափով կ'օգտւէր նրանից: Բայց երեք տարուայ փորձը բոլորովին հակառակն ապացուցեց. կառավարութիւնն իր նպատակին չըհասաւ և ստիպված եղաւ խոնարհվել

հանդամանքների առաջ: Զբաղասելով կառավարութեան կարգադրութեան, Օ'հոննէլի առաջարկութեամբ «Կաթօլիկական միութիւնը» ինքն իրան լուծեց և իր գործունէութիւնը վերջացած յայտարարեց: Նրա փոխարէն իսկոյն և եթ կազմակերպվեց նոր ընկերութիւն, որն իր կազմակերպութեան արտաքին ձևով տարբեր լինելով «Կաթօլիկական միութիւնից» և ոչ մի ձևական կապ չունենալով նրա հետ, աղատվում էր պարլամենտական նոր օրէնքին ենթարկվելուց, որն ուղղված էր միայն «Կաթօլիկական միութեան» դէմ: Օ'հոննէլի կազմակերպած նոր ընկերութիւնը յայտարարեց իրան լոկ բարեգործական ընկերութիւն, որի ղեկավար նպատակն էր տարածել ժողովրդի մէջ կրթութիւն, բանալ դպրոցներ ու հիւանդանոցներ: Քաղաքական դիտումների մասին ոչ մի խօսք չէր ասած, այն ինչ ընկերութիւնը նոր դիմակի տակ սկսեց նախկին եռանդով «Կաթօլիկական ընկերութեան» գործը շարունակել: Գործունէութեան արտաքին ձևերն ուրիշ էին, այն ինչ բովանդակութիւնը նոյն էր: Սյդպէս շարունակվեց մինչև 1828 թ., երբ 1825 թ. ժամանակաւոր օրէնքի լիազօրութիւնները պիտի վերջանային: Կառավարութիւնն ու պարլամենտը, պարզ տեսնելով իրանց կրած պարտութիւնը իրանդական ժողովրդական շարժումը խեղդելու գործում և ոչ մի ուրիշ հնար չըգտնելով օրինական ճանապարհով իրանց այդ դիտումներն իրագործելու համար, աւելի լաւ համարեցին լուծել 1825 թ. օրէնքի մասին, որն այդպիսով վախճանվեց մի բուպէ անգամ կեսնք չըվայելելով: 1828 թ. Օ'հոննէլի ամենամեծ գործը, «Կաթօլիկա-

կան միութիւնը», նորից կենդանութիւն ստացաւ ու սկսեց հսկայական քայլերով առաջ գնալ: Հետեանքն այն եղաւ, որ 1829 թ. Օ'հօննէլը մասամբ իր նպատակին հասաւ. նա վերջապէս կարողացաւ համոզել պարլամենտը՝ տալ իրլանդական կաթօլիկ ժողովրդին նրան խոստացած իրաւունքները: Պարլամենտը ձայների մեծամասնութեամբ ընդունեց կաթօլիկների քաղաքական իրաւունքների հաւասարացումը բողոքականների հետ. այդ օրէնքով Իրլանդիայի կաթօլիկ իրաւաւորիկ ժողովուրդը ձեռք բերեց բողոքական հողատէր արիստօկրատիայի հետ հաւասար քաղաքական իրաւունքներ, իսկ վերջինս, արիստօկրատիան, զրկվեց իր արտօնեալ դրութիւնից: Այդ առաջին մեծ յաղթութիւնն էր, որը տարաւ Իրլանդիան իր ազատութեան համար վարած ու վարող կռոււմ և այդ յաղթութիւնը եղաւ արդիւնք այն լայնածաւալ ժողովրդական շարժման, որին առաջնորդում էր Դանիէլ Օ'հօննէլը:

Մ.

1829 թ. յաղթութիւնը թէև մեծ ոգևորութիւն պատճառեց իրլանդացիներին, բայց շնորհիւ մի քանի անախորժ հանդամանքների դարձաւ փոխադարձ անբաւականութիւնների նոր աղբիւր: Բանը նրանումն էր, որ կաթօլիկներին վերաբերեալ օրէնագիծը մշակող պարլամենտական մասնաժողովը հարկաւոր չբահմարեց իր պարապմունքներին մասնակցելու հրաւիրել Օ'հօննէլին, օրէնագծի իսկական հեղինակին. այդ վարմունքը չէր կարող չըվերաւորել իրլանդա-

ցիների ինքնասիրութիւնը, որոնք իրանց հռչակաւոր առաջնորդին ազգի պարծանք էին համարում: Ժողովրդի մէջ Օ'հօննէլը յայտնի էր «աղաւաղ» մականունով. վերաւորել նրան այդ նշանակում էր վերաւորել ամբողջ ազգը: Բայց այդ ժողովրդական անբաւականութեան աղբիւր դարձան անգլիական կառավարութեան նորանոր քայլերը, ուղղված իրլանդական շարժման դէմ, որը շնորհիւ նոր հալածանքների նոր օյժով առաջ եկաւ: Այդ շարժման հետեւանքն եղաւ Օ'հօննէլի պարլամենտի անդամ ընտրվելը 1830 թ.: Մինչև 1840 թ. նշանաւոր փոթորիկներ չբաշտահեցին: Օ'հօննէլն իր կուսակիցների հետ դործում էր զլխաւորապէս պարլամենտում, ուր ամենանշանաւոր քայլն արաւ նա 1834 թ. նա առաջարկեց բրիտանական պարլամենտին ոչնչացնել 1800 թ. միութեան դաշնագիրը: Այդ յանդուգն առաջարկութիւնը մերժվեց 523 ձայնով ընդէմ 38. վերջիններիս թւում մի անգլիացու ձայն կար միայն: Օ'հօննէլը վաղօրօք գիտէր, որ իր առաջարկութիւնը մերժվելու է. նա այդ քայլն արաւ Իրլանդիայում ժողովրդական շարժումը զօրեղացնելու համար, և նա շուտով իր նպատակին հասաւ: 1840 թ. շարժումը հրդեհի պէս բռնեց ամբողջ Իրլանդիան: 65 տարեկան Օ'հօննէլը գիշեր-ցերեկ շրջում էր ամբողջ երկիրն ու կազմակերպում միախնդներ, ուր ժողովրդի թիւը տոսնեակ հազարներով էր հաշուում: Այդ միախնդներում նա ու նրա կողմնակիցները խօսում էին զլխաւորապէս միութեան դաշնագրի դէմ, ոգևորելով ժողովուրդին այն գաղափարներով, որ նա վաղ-ուշ յաղթանակը կըտանի, եթէ միշտ հաստատ քայլերով

գնաց իր ղեկավարներին ետևից դէպի աչքադրած նպատակը: Զընայած, որ բոլոր միախնդները խաղաղ բնավարութիւն էին կրում, կառավարութիւնը վճռեց վերջ դնել նրանց խիստ միջոցներով: 1843 թ. վերջին մեծ միախնդ էր նշանակված Դուբլինի մօտ գտնվող Կլոնտարֆ սււննում: Ժողովրդի ահազին խմբեր երկրի զանազան կողմերից հաւաքվեցին Կլոնտարֆ այդ միախնդին մասնակցելու: Նրա նախընթաց օրը կառավարութիւնը յատուկ հրովարտակով անպայման արգելեց միախնդը, սպառնալով յոժ գործ դնել, եթէ նրա այդ կարգադրութիւնն անուշադիր ֆնայ ժողովրդի կողմից: Օ'Կոննէլը, նախատեսելով արիւնահեղ ընդհարումը, վճռեց ենթարկվել կառավարութեան կարգադրութեան: Դեռ միախնդը չըկայած նա դիմեց հաւաքված ամբոխին մի յայտարարութեամբ, որով համոզում էր ժողովրդականներին ցրվել իրանց տները, խուսափել արիւնահեղ ընդհարումներից, որոնք մեռնել միայն կարող են իրլանդական գործը: Ժողովուրդը լսեց իր իմաստուն առաջնորդին ու ցրվեց: Վտանգաւոր ընդհանրացում էր շնորհիւ այդ հանգամանքի Օ'Կոննէլի ժողովրդականութիւնը մասամբ ընկաւ: «Երիտասարդ Իրլանդիա» կուսակցութիւնը, որ դեռ նոր էր ապարեզ դուրս եկել, Օ'Կոննէլի այդ քայլը թուլութիւն համարելով, անջատվեց նրանից: Կլոնտարֆի միախնդի խափանումով սկսվեց հալածանքների մի երկար շարք: Կառավարութիւնը դատի ենթարկեց Օ'Կոննէլին ու նրա մտերիմ աշխատակիցներին, նախօրօք բանտարկելով նրանց: Դատը, որ տեւեց մի քանի ամիս, վերջացաւ 1844 թ. փետրվարին: Օ'Կոն-

նէլն իր կողմնակիցներով ենթարկվեց երկարատեւ բանտարկութեան ու տուգանքի: Բանտ նստելով, նրանք բողոքեցին դատաւորների անարդար վճռի դէմ ու վճռաջինջ դանդաղ ներկայացրին լօրդերի ժողովին, որը յանձնեց այդ գործն իր դատաստանական կօմիտէին: Վերջինս, ուշի ուշով քննադատելով Օ'Կոննէլի գործը, հակառակ օրինաց դատաւ դատաստանի կայացրած վճիռը: Դատապարտվածներն ազատվեցին: Երբ Օ'Կոննէլը դուրս եկաւ բանտից, բոլորն էլ սպասում էին, որ նա կրկին կենդանութիւն կրայ վեթիարի շարժման, բայց այդ յոյսերը չը իրագործվեցին: 69 տարեկան Օ'Կոննէլն արդէն զրկվել էր իր վաղեմի յոժերից: Իր բազմաշարժար կենսի վերջին տարիները մեծ ազդասէրը խաղաղութեան մէջ անցկացրեց, երբեմն միայն երևալով հասարակական ժողովներում: Նա վախճանվեց 1847 թ. մայիսի 15-ին, 72 տարեկան հասակում, և թաղվեց Դուբլինի Գրէնեվիլ զերեզմանատնում:

XX.

Օ'Կոննէլի մահից յետոյ «Երիտասարդ Իրլանդիա» կուսակցութիւնը փորձեց կանգնել նրա տեղը, անցնել ժողովրդական շարժման զուխը, և այդ մասամբ յաջողվեց նրան: «Երիտասարդ Իրլանդիան» սկսեց բացարձակ քարոզել, որ օրինական ճանապարհով, սահմանադրական միջոցներով Իրլանդիան երբէք ձեռք չի բերիլ քաղաքական անկախութիւն. միակ ելքը արիւնահեղ ապստամբութիւնն է: Վրա հասաւ 1848 թ., իր հետ բերելով Ֆրանսիական

երրորդ յեղափոխութիւնը: «Երիտասարդ Իրլանդիան» րոպէն յարմար դատեց իր նպատակներին ձգտելու համար ու մի պատգամաւորութիւն ուղարկեց Ֆրանսիա հանրապետական կառավարութեան օգնութիւնը խնդրելու անգլիական լծից ազատվելու համար: Լամարտինը, որը գլուխ էր կանգնած հանրապետական կառավարութեան, մերժեց իրլանդացիների խնդիրը, պատճառաբանելով իր պատասխանը նրանով, որ Ֆրանսիայի համար թանկ է ամուր բարեկամական կապեր պահպանել ամբողջ Բրիտանական պետութեան հետ, այլ ոչ թէ նրա մի որ և իցէ մասի: Իրլանդացիներին մնում էր իրանց յոյսն իրանց բաղուկների վրա դնել միայն:

Անգլիական կառավարութիւնը, մօտիկ ծանօթանալով «Երիտասարդ Իրլանդիայի» իսկական նպատակների հետ, վճռեց ոչ մի միջոց չընկալել այդ կուսակցութիւնը ոչնչացնելու համար: Նա պարլամենտից պահանջեց ու ստացաւ արտաքոյ կարգի լիազօրութիւններ, որոնց օգնութեամբ կարձ ժամանակամիջոցում խեղդեց իրլանդացիների բացարձակ շարժումը: Երիտասարդութիւնն անգոր գտնվեցաւ դիմադրել կառավարութեան, քանի որ նա իր ետեւում չունէր Օ'Կոննէլի լէգիօնները, ամբօխի մեծամասնութիւնը:

Կառավարութեան հալածանքները ոչնչացնելով բացարձակ շարժումը, ստիպեցին իրլանդացիներին այլ միջոցների դիմել: Առաջ եկան բազմաթիւ գաղտնի ընկերութիւններ, որոնք մինչև այդ ժամանակ դուրսէին չունէին Իրլանդիայում:

Օ'Կոննէլի գործունէութեան եղանակը, ինչպէս տեսանք, բոլորովին ուրիշ էր. նրա ժամանակ գաղտնի ընկերութիւններն անօգուտ էին ու մինչև անգամ վնասակար: Այն ինչ 1848 թ. Անգլիայի բռնած ընթացքը բնական ծնունդ տուեց գաղտնի ընկերութիւններին, որոնց ցանցով շուտով ծածկվեց ամբողջ երկիրը: Երկար տարիներ այդ խուլ շարժումը գոյութեան ոչ մի արտաքին նշան չըցոյց տուեց. նա գտնվում էր նախապատրաստական շրջանի մէջ: Գաղտնի թերթերը, գաղտնի տպարաններն ու գրքայինները եռանդով գործում էին: Երկրի խորքերում թափառում էին քարոզիչներ, որոնք իրանց վարդապետութիւնները տարածում էին ամբօխի ամենամոլթը խորշերում: Այդ պրօպագանդիստները կոչվում էին «Ֆէնի»։ Անձնուէր ֆէնիները յաճախ բանտ էին նետվում, կախաղան էին բարձրանում, բայց չընայած դրան, նրանց թիւը գնալով մեծանում էր: Արիւնաներկ ճանապարհը նրանց սարսուռէր պատճառում. գաղափարը միշտ ոգևորում էր նրանց ու տանում դէպի բանտ, տանջանք, կախաղան, մահ, դէպի մարտիրոսութիւն...

XXI.

Գաղտնի ընկերութիւնների նախապատրաստական շրջանը հետեանք ունեցաւ նոր հսկայական շարժում, որը կոչվեցաւ «Ֆէնիանիզմ»: Այդ շարժումն արիւնահեղ ապստամբութեան մի նոր սոսկալի փորձ էր. նա առաջ եկաւ զլիաւորապէս աքսորից ու բանտերից փախած «Երիտասարդ Իրլանդիայի» նախկին

Հովուի պաշտպանը.

անդամների շնորհիւ: Փախստականները, իրրե փորձ-ված զինուորներ, վճռեցին իրանց ձեռքն առնել ապրս-տամբութեան գրոշակը: Շարժումն իր գաղաթնակե-տին հասաւ 1867 թ.: Ֆէնիններն այս անգամ էլ, ինչպէս 1848 թ., վճռեցին ուրիշն օգնութեան ևս չիմել: Նրանք զիմեցին չիւսիսային Ամերիկայի Միա-ցեալ Նահանգներում ապրող բազմաթիւ գաղթա-կան իրլանդացիներին, որոնք օգնութեան հասան դրամով, զէնքով, իսկ շատ կամաւորներ անձամբ եկան ու մտան Ֆէնինների շարքերը:

Ֆէնիանիզմը խորն ալմատներ ձգեց ժողովրդի մէջ: Ամերիկայի իրլանդացիների համակրութիւնը և բուռն փափազը՝ իրանց նախահայրերի ծննդավայր «Կանաչ կղզին» ազատ տեսնել, կրկնապատկեցին Ֆէնինների ոյժերը, որոնք աւելի համարձակ սկսեցին գործել: Անգլիայում ընդհանուր տաքնապը գնալով զօրեղա-նում էր. իրլանդացիների դադանի պատրաստու-թիւնները մեծ երկիւղ էին պատճառում անգլիա-ցիներին: Կառավարութիւնը լարում էր իր բոլոր ոյժերը վտանգի առաջն առնելու համար, ապստամ-բութիւնը խանդարեւու, բայց այդ նրան չաջողվեց: Ֆէնիններն արդէն մեծ պատրաստութիւններ էին տե-սել. երկիրը բաժանել էին զինուորական շրջանների և իւրաքանչիւրը յանձնել էին առանձին հրամանա-տարի, ժողովրդին զէնք էին բաժանել ու գործելու հարկաւոր հրահանգները վաղօրօք տարածել: Իւրա-քանչիւրի դիրք որոշված էր, և ամեն դք սպասում էր կազմ ու պատրաստ ընկնել ուղղմի դաշտում քաջի պէս, ծածկել իր ոսկորներով իր հայրենի հողը: 1867 թ. մարտին ընդհանուր ապստամբու-

թիւնը հրդեհի պէս պիտի բռնէր ամբողջ Իրլան-դիան: Նշանակած ժամանակին ապստամբութիւնը սկսվեց, բայց ոչ մի անգամից և ոչ Իրլանդիայի բոլոր անկիւններում: Անգլիական կառավարութիւնը, որի ղեկն այն ժամանակ գտնվում էր պաշտպանողական Դիլլոյէլի ձեռքում, զօրքով ծածկեց ամբողջ երկիրը: Իրիտանական զրահակիր նաւերը շրջապատեցին Իր-լանդիան, իրանց թնդանօթների բերաններն ուղղե-լով ծովեզերեայ բնակավայրերին: Ֆէնիական զենե-րաւորից շատերը, չընայած իրանց անօրինակ քա-ջութեան, ընկան պատերազմի դաշտում, շատերը զերի ընկան ու մահուան դատապարտվեցին: Ֆէնիա-կան անկանոն զօրքը, վատ զինւած ամբոխը, ցրվեց. շատերը մեռան քաջի ու հերոսի մահով, շատերը մարտիրոսվեցին կախաղանների վրա, շատերը բան-տեր նետվեցին ու ցմահ տաժանակիր աշխատանքների ենթարկվեցին: Ամբողջ Իրլանդիան ծածկվեց զինու-րական դատարանների ցանցով, որոնք զէպի ապրս-տամբներն անգուց չէին ու անողորմ:

XXIII.

Կառավարութիւնը ջարդեց, ջախջախեց Ֆէնինե-րին, բայց նրանց յարուցած շարժումն առանց բարի հետեանքի չըմնաց Իրլանդիայի համար: Ֆէնինների ապստամբութիւնը պարզ ապացուցեց, որ Անգլիայի բռնած ընթացքը զէպի Իրլանդիան վտանգաւոր է: Անգլիական պարլամենտի մի խոշոր մասը, ազատա-միտ կուսակցութիւնը, որի ղեկը 60-ական թւերի վերջերին նոր էր անցել Գլադստօնի ձեռքը, սկսեց

բացարձակ բողոքել Դիզրայելի կառավարութեան ձեռք առած անողորմ խիստ միջոյնների դէմ, ասելով, որ Դիզրայելի սխտեմն անդոր է զսպել իրլանդացիների ձգտումները. զէնքի ու վառօդի յոժով ոչինչ չի կարելի շինել. միակ ելքն Իրլանդիան խաղաղացնելու համար՝ վերանորոգութիւններն են, որոնցից կառավարութիւնը չըպէտք է խոյս տայ: 1868 թ. մարտին, երբ Ֆէնիկների ողբալի ապստամբութիւնից հազիւ անցել էր մի տարի, Գլադստօնը, իբրեւ լիազօր գլուխ ամբողջ ազատամիտ բանակի, մի շատ ազդու ճառով յայտնեց պարլամենտում, որ արդէն հասել է ժամանակը, երբ Սնդլիան պէտք է խղճմոսնքով վերաբերվի դէպի Իրլանդիան: «Եթէ մենք բարեխիղճ մարդիկ ենք,—այս խօսքերով վերջացրեց Գլադստօնն իր նշանաւոր ճառը,—պէտք է ձեռք մեկնենք բազմաչար Իրլանդիային յանուն ճշմարտութեան ու արդարադատութեան, յիշելով, որ երբ գործը պարզված է ու հասել է արդարադատութեան ժամը, իւրաքանչիւր յետաձգումն հաւասար է արդարադատութեան մերժման, ուրիշ կերպ ասած, անբարեխղճութեան»:

1868 թ. վերջին Դիզրայելի պահպանողական կառավարութիւնն քնկաւ: Գլադստօնն առաջին անգամ ձեռք առաւ կառավարութեան ղեկը ու կազմակերպեց իր կուսակիցների շրջանից նոր ազատամիտ կառավարութիւն: Գլադստօնի կառավարութեան գլուխ անցնելով սկսվեց Իրլանդիայի համար առաջադիմութեան, խաղաղ զարգացման ու վերանորոգութիւնների շրջան: Իր ծրագրի մէջ Գլադստօնը մտցրեց երկու խոշոր օրէնսդէր Իրլանդիայի համար. մինը

նպատակ ունէր բողոքական պետական եկեղեցու գերիշխանութիւնը ոչնչացնել Իրլանդիայում, միւսը վերաբերում էր հողային բարդ ու մութ հարցերին:

Առաջի օրէնագիծը 1869 թ. յաջողութեամբ անցաւ պարլամենտով, ընդունվեց երկու պարլամենտների կողմից էլ ու օրէնքի զօրութիւն ստացաւ: Դա մի մեծ բարերարութիւն էր իրլանդական ժողովրդի համար, որին բողոքական եկեղեցին ոտնահարում ու կեղեքում էր անխնայ. 1869 թ. նա վերջնականապէս ազատվեց այդ կեղեքողից:

1870 թ. Գլադստօնն անցկացրեց պարլամենտում իր առաջին օրէնքը հողային խնդրին վերաբերեալ: Այդ բարերար օրէնքով իրլանդացի հասարակ երկրագործը, ֆէրմերը, փոքր ի շատէ ազատվեց հողատիրոջ, լէնդլորդի, անգլուսպ կամայականութիւնից: Հողատիրոջ անսահման իրաւունքները սահմանափակվեցին, իսկ բոլորովին իրաւազուրկ երկրագործը ձեռք բերեց իրաւունքի գոնէ մի նշոյլ. այդ էլ մեծ բան էր նրա համար:

XX.

Գլադստօնի վերանորոգութիւնները մեծ ազդեցութիւն ունեցան Իրլանդիայի առաջադիմութեան վրա: Ֆէնիկների ապստամբութեան ժամանակ անողորմ հալածված ժողովուրդը, բազմաթիւ անբուժելի վէրքեր ստացած Իրլանդիայի ամբոխը, կրկին սկսեց գլուխ բարձրացնել կրկին սկսեց մտածել երջանիկ ապագայի մասին: Ֆէնիկներ չեղային: Նրանց սխտեմը նրանց հետ անհետացաւ: Եթէ նրանք երեւան էլ գային,

ժողովուրդն այլ ևս նրանց հաւելց չէր դնալ: Օրինաւոր դործունէութիւնը կրկին հնարաւոր դարձաւ: Առաջ եկաւ նոր վիթխարի աղղային շարժում, որն իրան հիմք ընտրեց Օ'Կոննէլի սկզբունքները: Այդ շարժումը նպատակ ունէր ձեռք բերել Իրլանդիայի քաղաքական անկախութիւնը սահմանադրական ճանապարհով օրինաւոր աղխադրիւթի միջոցով, անհուն եռանդով, պաշտպանելով միշտ Իրլանդիայի դատը անդլիական պարլամենտի առաջ: Այդ նոր շարժումը, որը զրօշմիկ «հոմը-մում» անունով (Home-Rouille Movement) ծնունդ ստացաւ 1870 թ., շարունակվում է մինչև մեր օրերը, և այս բուսելիս նա իր գաղափարակէտին է հասած: Այսօր վազն այդ վիթխարի շարժման հետեանքն է լինելու իրլանդական ժողովրդի դարաւոր ձգտումների իրագործումն: Այդ ահռելի շարժման ամենամեծ հերոսն է Պարնէլլը, Իրլանդիայի այդ «անթագալիք թագաւորը»:

1870 թ. դարնանը Իրլանդիայի գլխաւոր կենտրոններում կայացան մի շարք նախապատրաստական ժողովներ, որոնք նպատակ ունէին որոշել ու ձեռնարկել նոր շարժման էական պահանջները: Այդ ժողովներից առաջինը կայացաւ 1870 թ. մայիսի 19-ին Դուրլինի Bilton Hotel ժողովրդական զահլիւճում, ուր այդ օրը հաւաքվել էին Դուրլինի քաղաքայիններից մօտ 65 հոգի «Իրլանդիայի ներկայ գրութեան մասին խորհրդակցելու համար»: Այդ փոքրիկ ժողովը կազմված էր զանազան դասակարգերի, զանազան քաղաքական ու կրօնական համոզմունքի աէր մարդկանցից. բայց չնայած այդ հանգամանքին երկար վիճաբանութիւնները պարզեցին, որ բոլոր ժո-

ղովականները որեւորված են մի գաղափարով՝ աեանել հայրենիքի ապագայ երջանկութիւնը և այդ մեծ նպատակին զիմել ձեռք ձեռքի տուած, զործել անպայման համերաշխութեամբ, ընդհանուր թշնամու զիմաց մոռանալ անձնական ու նեղ կուսակցական երկպառակութիւնները ու կազմել մի ներդաշնակ ոգի ու մի հաւաքական զօրեղ մարմին: Երբ յայտնած զանազան կարծիքները ենթարկվեցին բազմակողմանի քննադատութեան, ժողովականներից մինը առաջարկեց ընդունել հետեեալ վճիռը. «Ներկայ ժողովը կարծում է, որ Իրլանդիայի բազմութիւ վերքերի իսկական բուժիչ միջոցն Իրլանդիայի համար սեփական պարլամենտ հիմնելումն է կայանում, երկրի ներքին, անային զործերը վարելու բոլոր իրաւունքներով ու լիազօրութիւններով»: Այդ վճիռն ընդունվեց ժողովականների կողմից միաձայն. այդ հանգամանքը մեծ ոգևորութիւն առաջ բերեց: Ժողովն անմիջապէս վճռեց իր միջից ընտրել մի կօմիտեա ընդունած վճռի հիմքերը պարզ ձեակերպելու համար: Կօմիտեան հրաւերներ ուղարկեց սկսեց զործել մեծ եռանդով. հրաւերներ ուղարկեց երկրի զանազան անկիւնները նոր ընկերութիւններ կազմակերպելու համար: Շնորհիւ այդ հրաւերների քիչ ժամանակից յետոյ գոյութիւն ստացաւ մի նոր մեծ ընկերութիւն «Իրլանդիայի ինքնավարութեան միութիւն» անունով: Այդ ընկերութիւնը բացարձակ պահանջել սկսաւ, որ Իրլանդիան հպատակ երկիր է ոչ թէ անգլիական պարլամենտի ու կառավարութեան, այլ անգլիական թագի, որի բարձր հովանաւորութեան տակ երկու երկիրներն էլ Անգլիան ու Իրլանդիան, պիտի լինեն երկու դաշնակից պետու-

թիւներ, իւրաքանչիւրն իր սեփական պարլամենտով ու ներքին ինքնուրոյն վարչութեամբ: Բրիտանական պարլամենտը մի քանի դէպքերում գերիշխող կարող է լինել, բայց այդ գերիշխանութիւնը երբէք չը պէտք է վերաբերվի Իրլանդիայի ներքին գործերին: Այդ կերպով ձևակերպելով ազգային հիմնական պահանջները, «Իրլանդիայի ինքնավարութեան միութիւնը» հրաւէր կարդաց բոլոր իրլանդացիներին միանալ ու բոլոր օրինաւոր ու սահմանադրական միջոցներով դէպի իրանց գրաւել Իրլանդիայի ու Անգլիայի հասարակաց կարծիքը, ազգային շարժման հոսանքի առաջը մղել ամեն դասակարգի ու ամեն համոզմունքի մարդկանց, իրազօրծելու համար սղգային այն մեծ ձգտումները, որոնք դարերի ընթացքում վառել են իւրաքանչիւր իրլանդացու սիրտն ու ուղեղը և ոգևորել են բազմաթիւ սերունդներ:



Իրերն այդ գրութեան մէջ էին, երբ ասպարէզ եկաւ Պարնէլլը, որին Նախախնամութիւնն էր ուղարկել իրազօրծելու իրլանդական ժողովրդի դարաւոր իղձերը: Չարլզ Ստիւարտ Պարնէլլը ծնվել է 1846 թ. Աւօնդիլում, որը գտնվում է Վիկիտու կոմսսութեան մէջ: Նրա նախահայրերն սկզբում բնակվելիս են եղել Անգլիայում, որտեղից 17-րորդ դարում տեղափոխվելով Իրլանդիա, մշտական բնակութիւն են հաստատել այդ երկրում, ահագին կալուածներ ձեռք բերելով: Նրանցից մինը, Ջոն Պարնէլլ, 18-րորդ դարի երկրորդ կիսում իրլանդական պարլամենտի

ստորին պալատում պատգամաւորի տեղ ձեռք բերեց: Իսկ 1787 թ. նրա որդի չէնրի Պարնէլլը կարողացաւ մինչև անգամ իրլանդական կառավարութեան շքանք մանել Ֆինանսների մինիստրի պաշտօնով: 1800 թ. հայր ու որդի Պարնէլլները բաւժն ընդլիմագրութիւն ցոյց տուին միութեան դաշնագրի կապելուն, Իրլանդիայի պարլամենտի ոչնչացման, բայց նրանց ձայնը ոչ ոք չըլսեց: Երբ միութեան դաշնագիրը գոյութիւն ստացաւ, Ջոն ու չէնրի Պարնէլլները, չնայած իրանց բողոքին, իբրև Իրլանդիայի պատգամաւորներ մտան անդլիական պարլամենտ: Անգլիայում չէնրի Պարնէլլը շուտով դրաւեց իր վրա բարձր դասակարգի ուշադրութիւնը և 1832 թ. լորդ Գրէյի կառավարութեան մէջ ստացաւ զինւորական մինիստրի պաշտօն: 1841 թ. նա լորդութիւն ստացաւ բարօն Կօնգլետօն տիտղոսով: Այդ լորդ Կօնգլետօնն ունէր մի եղբայրորդի, Ջոն չէնրի Պարնէլլ, որն իր հօրեղբոր բարձր հասարակական դիրքի շնորհիւ կարողացաւ ամուսնանալ ամերիկացի ծովապետ Չարլզ Ստիւարտի աղջկայ հետ: Այդ ամուսնութեան պտուղն եղաւ Չարլզ Ստիւարտ Պարնէլլը, Իրլանդիայի անթագալիր թագաւորը: Պարնէլլն իր թէ սկզբնական, թէ միջնակարգ և թէ բարձրագոյն ուսումնի ստացաւ Անգլիայում: 60-ական թւականների վերջերում աւարտելով իր ուսումնի Կէմբրիջի համալսարանում, նա մի առժամանակ ծառայարհորդեց չիւսիսային Ամերիկայում, որտեղից նապարհորդեց հայրենիք միայն 1871 թ., ճիշտ այն վերադարձաւ հայրենիք միայն 1871 թ., ճիշտ այն ժամանակ, երբ Իրլանդիայում նշմարվել սկսան նոր ժողովրդական շարժման նշանները: հայրենիքում նա

քնակութիւն հաստատեց Աւսնդելում, իր տոհմական կալուածներում, գոյութիւն ունեցող ազգային շարժումից բոլորովին հեռու պահելով իրան:

Իր կալուածներում երիտասարդ լէնդ-լորդն առանձնացել էր միւս բոլոր աշխարհից: Նա մեծ հետաքրքրութեամբ պարապում էր անտեսական գործերով, իսկ ազատ ժամերը նուիրում էր օրսորդական գուարձութիւններին: Դեռ ուսանողութեան ժամանակ Պարնէլը մեծ ձգտում ունէր դէպի մեքենայագործութիւնը, երկրաչափութիւնը ու դէպի բնական զիտութիւնները, որոնցից ամենից շատ զրաւում էին նրա ուշադրութիւնը քիմիան ու հանքաբանութիւնը: Իր կալուածներում նա շինեց մի փայտագործարան նոր սխտանի մեքենաներով և բացի այդ մի ուրիշ գործարան ևս, որտեղ պատրաստվում էին խողանակներ:

Իր ֆէրմերների հետ Պարնէլը վարվում էր մեծ բարեգծութեամբ ու ամեն կերպ աշխատում էր բաւարարութիւն տալ նրանց անտեսական պահանջներին: Դրանով նա մեծ անբաւականութիւն էր պատճառում իր հարեան կալուածատէրերին, որոնց կարծիքով Պարնէլն իր մարդասէր վարմունքով «երես էր տալիս ֆէրմերներին», անբարոյականացնում ու փչացնում էր նրանց, քանի որ լէնդ-լորդի կարծիքով ֆէրմերի հնազանդութիւնն իր ախրով պէտք է սորթութեան հասնէր:

Սկսած 1872 թ. իրլանդական գործերն սկսան քիչ-քիչ իրանց վրա գրաւել Պարնէլի ուշադրութիւնը. գնալով հետաքրքրութիւնն այդ գործերով զօրեղանում էր նրա մէջ, թէև նա շարունակում էր զբաղվել իր անտեսական գործերով: Նրան շատ դուր

եկաւ 1872 թ. Գլադստօնի մի նոր վերանորոգութիւնն Իրլանդիայում, յայտնի Ballot Act օրէնքը, որով ամբողջ Իրլանդիային շնորհվեց գաղանի քուէարկութեան իրաւունք, որն անկախ ու ինքնուրոյն պայմանների մէջ է գնում ընտրողներին:

XXI.

1874 թ. Սնդիլիայում և Իրլանդիայում կայացան պարլամենտական ընդհանուր ընտրութիւններ, որոնց հետեանքը շատ աջող էր իրլանդացի հոմբուլականների համար: 1869 թ. ընդհանուր ընտրութիւնների ժամանակ Իրլանդիան տուեց 10 հոմբուլական, ազգային անկախութեան կողմնակից, պատգամաւոր, 55 ազատամիտ և 38 պահպանողական, այն ինչ 1874 թ. ընտրութիւնները տուին 60 հոմբուլական, 12 ազատամիտ և 31 պահպանողական պատգամաւոր: Հոմբուլական շարժումն արագ քայլերով առաջ էր գրելում: այդ ակներե էր:

1874 թ., երբ վերջացան ընդհանուր ընտրութիւնները, Պարնէլը գործերի դրութիւնը լըջօրէն ուսումնասիրելուց յետոյ, վճռեց դուրս գալ քաղաքական գործունէութեան ասպարէզ: Սյոլ ժամանակ նա միայն 29 տարեկան էր: Դուրլինի պատգամաւորներից մինը, գնդապետ Տէյլօր, Դիլլայէլն նոր կառավարութեան մէջ մինխտրի պաշտօն ստանալով, ըստ գոյութիւն ունեցող օրէնքի պէտք է ենթարկվէր վերընտրութեան, այսինքն պէտք է թողնէր պատգամաւորական լիազօրութիւններն ու նորից ընտրվէր նախկին ընտրողական շրջանում: Տէյլօրը պատկա-

նում էր պահպանողական կուսակցութեան: Պարնէլլն օգտուեց դէպքից ու վճռեց իր թիկնածութիւնն առաջարկել ընտրողներին իրեն համրութեան կուսակցութեան ներկայացուցիչ: Այն ժամանակ նա մի բոլորովին անյայտ անձնաւորութիւն էր առանց որոշ ծրագրի ու փոքր ի շատէ նշմարելի անցեալի: Շատերը կասկածանքով էին նայում նրա վրա, կարծելով, որ բողոքական հարուստ երիտասարդ էլնգ-լորդը ձգտում է պատգամաւորական կոչման ոչ թէ իր ժողովրդին ու հայրենիքին որ և է ծառայութիւն մատուցանելու համար, այլ անձնական փայլուն կարիերա ստեղծելու դիտաւորութիւնով: Այդ պատճառով «համրութեան միութիւն» (այդ ընկերութիւնը գոյութիւն ստացաւ 1873 թ. և բռնեց 1870 թ. կազմակերպված «Իրլանդական ինքնավարութեան միութիւն» ընկերութեան դեկը) ընկերութեան կենտրոնական կոմիտէտը վճռեց աւելի մօտիկ ծանօթանալ Պարնէլլի հետ, նախ քան առաջարկել նրա թիկնածութիւնը: Կոմիտէտի հրաւերով Պարնէլլն այցելեց նրա մասնաւոր ժողովներից մինը, որտեղ խոյն կարողացաւ համակրութիւն ձեռք բերել: Կոմիտէտի ղեկավար անդամներից երկուսը Զօն Մարտին, 1848 թ. շարժման առաջնորդներից մինը, և Սրաուեր Սեօլլիվան առաջարկեցին կոմիտէտին ընդունել Պարնէլլի թիկնածութիւնը: Կոմիտէտն ընդունեց և յանձնարարեց Սեօլլիվանին պաշտօնապէս առաջարկել Պարնէլլի թիկնածութիւնը Դուբլինի «Բօտօնդա» դահլիճում կայանալիք միտինգում: Նշանակած օրը Պարնէլլն առաջին անգամ զնայ հասարակական ժողով իրեն հօւտօր, այլ ոչ թէ ունկնդիր: Նա շատ

անհանգիստ էր. պատրաստած ճառը մի քանի անգամ սերտել էր. սրտի տենդային բաբախումով նա սպասում էր այն ըոպէին, երբ կըսկսի խօսել: Հասաւ այդ ըոպէն: Պարնէլլն առաջին անգամ սկսեց երես առ երես խօսել ժողովրդի հետ, բայց անաջող:

Այն մարդը, որը մի տասնեակ տարուց յետոյ պէտք է վճռէր Իրլանդիայի ապագան, ունեցաւ մի շատ համեստ դերիւտ: Ահա ինչպէս է նկարագրում Պարնէլլի առաջին ճառը Սեօլլիվանը. «Երբ ես առաջարկեցի նրա թիկնածութիւնը, հասարակութիւնը համակրական ցոյցեր արաւ: Խրախուսված դրանից, Պարնէլլն ամբիօն բարձրացաւ ճառ արտասանելու: Ի մեծ զարմանք ունկնդիրների նա բոլորովին շփովեց. անդադար կանգ էր առնում նա, սխալվում էր, խառնում էր դարձուածները, շատ նախադասութիւններ չէր վերջացնում, ձայնը հազիւ էր լսվում: Նա բոլոր ժամանակ՝ զոգում էր. գունատված դէմքի վրա պարզ նշմարվում էին սաստիկ ջղային գոգուման հետքեր: Բոլոր ժամանակ հանդիսականները, մանկելով նրա դրութիւնը, անկեղծ համակրական ցոյցերով աշխատում էին քաջալերել նրան, և երբ նա աւարտեց իր ճառը, ճանապարհեցին մինչև իր տեղը բուռն ծափահարութիւններով: Չընայած այդ համակրական ցոյցերին շատերը հիասթափված չարժում էին զլուխներն ու ասում. «Եթէ Պարնէլլն յաջողվի երբ և իցէ ընտրվել պարլամենտի անդամ, նա անշուշտ «Համր պատգամաւոր» հռչակ կըստանայ և նրա մասին կասեն՝ Single speech Parnell, որը նշանակում է՝ «Պարնէլլը, որն իր ամբողջ կեանքում արտասանել է մի ճառ միայն»:

XXI.

Այդ անաջող դեբիտի հետևանքն այն եղաւ, որ ընտրութիւնների ժամանակ Պարնէլլը պարտութիւն կրեց, իսկ նրա հակառակորդ Տէյլօրը յաղթանակը տարաւ: Բայց այդ անյաջողութիւնը նրան չը յուսահատեցրեց. նա հաւատում էր իր տպագրային, և այդ հաւատը գնալով ամրոնում էր նրա մէջ: 1875 թ. վախճանվեց Զօն Մարտինը, որը պատգամաւոր էր Միտ կոմսութեան կողմից: Մարտինի բարեկամներն առաջարկեցին ընտրողներին Պարնէլլի թիկնաձութիւնը, որն այդ անգամ ընտրվեց ձայների ահազին մեծամասնութեամբ: 1875 թ. ապրիլին Պարնէլլն առաջին անգամ երեւցաւ անգլիական պարլամենտում իբրեւ Իրլանդիայի Միտ կոմսութեան պատգամաւոր: Նա այն ժամանակ գեռ. շատ երիտասարդ էր, հազիւ 30 տարեկան: Նրա պարլամենտում երեւալը ոչ դժի ուշադրութիւնը չըգրաւեց: 1875 և 1876 թ. պարլամենտական նստաշրջանների ժամանակ նա մի աչքի ընկնող գործունէութիւն չըցոյց տուեց. նրա գոյութիւնը նկատելի էր միայն նրա մօտիկ բարեկամների շրջանում: Իր հոշակաւոր քաղաքական գործունէութեան այդ սկզբի տարիները նա ամբողջապէս նուիրեց իրան իրլանդական պարլամենտական կուսակցութեան գործունէութեան հետ բաղմախոգմանի ծանօթանալուն և մշակեց իր ապագայ գործունէութեան այն հանձարիղ սխառեմը, որի միջոցով նա բացարձակ պատերազմ սկսեց մղել բրիտանական պարլամենտի դէմ ու վերջ վերջի ետեւից հասցնել նրան:

Այն ժամանակ, երբ Պարնէլլը մուտք գործեց պարլամենտը, իրլանդական կուսակցութիւնը ոչ մի զգալի ազդեցութիւն չէր կարողանում գործել գործերի ընդհանուր ընթացքի վրա. նրա գոյութիւնը, իբրեւ առանձին քաղաքական կուսակցութեան, համարեա աննկատելի էր: Ըստ նախնի սովորութեան ամեն տարի նա առաջարկութիւն էր անում պարլամենտին ինքնավարութիւն շնորհել Իրլանդիային, որն, ի հարկէ, ամեն անգամ մերժվում էր ձայների ահազին մեծամասնութեամբ, ոչ մի առանձին տպագրութիւն չըթողնելով թէ պարլամենտի և թէ պարլամենտից դուրս: Գործերի այդ դրութիւնը հետեանք էր իրլանդական կուսակցութեան թուլութեան, իսկ այդ թուլութիւնը առաջ էր գալիս նրա առաջնորդների անընդունակութիւնից, որոնք իրանց չափաւորութեան շնորհիւ իրլանդական ժողովրդի մեծամասնութեան կողմից չէին վայելում այն համակրութիւնը, որն առհասարակ ոյժ է տալիս հասարակական գործիչներին: Կուսակցութիւնը չունէր որոշ տակտիկա ու ամուր սկզբունքներ. յաճախ ենթարկվում էր կողմնակի ազդեցութիւնների: Նրա պարագլուխն էր մի ոմն Իսահակ Բեօտտ—մի շատ անգոյն ու չափաւոր մարդ, զուրկ որ և է հեղինակութիւնից. նրա ղեկավարութեամբ կուսակցութիւնը չէր կարող անկախ, ինքնուրոյն դեր խաղալ:

Պարնէլլը, մուտք գործելով պարլամենտ ու ամբողջ երկու տարի մօտիկից ուսումնասիրելով գործերի դրութիւնը, եկաւ այն համոզմունքին, որ իրլանդական կուսակցութիւնը շատ թոյլ է. երկրի շահերը պահանջում են անպայման կերպարանափո-

խել կուսակցութեան կազմակերպութիւնը և նրա պարլամենտական տակախիկան, դործունէութեան եղանակը: Նա սկսեց արծարծել այն միտքը, որ իրլանդական կուսակցութիւնը պէտք է բոլորովին անկախ դիրք բռնի ու չենթարկվի անգլիական որ և է կուսակցութեան ազդեցութեան. նա պէտք է պարլամենտում կռիւ մղի անգլիական կուսակցութիւնների դէմ, այլ ոչ թէ սրա կամ նրա հետ դաշը կապի մի որ և է ողորմութիւն ստանալու յուսով: Իրլանդիային վերաբերեալ վերանորոգութիւնները նա պէտք է դուրս խլի պարլամենտի ձեռքից, այլ ոչ թէ խնդրի իրրե վարձատրութիւն իր մատուցած ծառայութիւնների: «Հոմրուլական կուսակցութիւնը, — ասում էր Պարնէլլը, — պէտք է վեհութեամբ բարձրացնի իր պլուխը ու հաստատ քայլերով առաջ ընթանայ իրրե ազգային նուիրական ձգտումների խեղական դրօշակակիր»: Հոմրուլական շարժմանն ընդհանուր ազգային բնաւորութիւն տալու համար ու աւելի ցոյց ներշնչելու դիտաւորութեամբ Պարնէլլն անհրաժեշտ գտաւ Իրլանդիայի քաղաքական վերանորոգութեան հարցն անխորտակելի կապերով կապել հողային վերանորոգութեան հարցի հետ, լաւ իմանալով, թէ ինչքան մեծ է զրա պահանջը Իրլանդիայի զիւղական ամբօխի համար, որի անտեսական ողորմելի դրութիւնը դնալով աւելի ևս անելանելի էր դառնում, և որը ձգտում էր քաղաքական անկախութեան ղլխաւորապէս իր անտեսական ցաւերն ու վէրքերը զարմանելու համար:

Ահա այն հիմնական խնդիրները, որոնց իրագործման Պարնէլլը նուիրեց իր ամբողջ պարլամենտական գործունէութիւնը սկսած 1877 թ.:

XXIII.

1874 թ. Գլադստօնի ազատամիտ կառավարութիւնը ստիպված եղաւ հեռանալ ասպարէզից: Նրա տեղը բռնեց պահպանողական Ռիդըայէլին, որից ոչ մի բարիք սպասել Իրլանդիան չէր կարող, իհարկէ: 1877 թ. պարլամենտական նստաշրջանը բացվեց ըստ սովորականին դահական ճառով, որի մէջ Իրլանդիայի օգտին ոչ մի բարի խոստում չըկար: Պարնէլլը կրկին անգամ տեսաւ, որ առանց կռիւ իր իրաւաւորի հայրենիքի համար ոչինչ չի կարող տնել, և նա վճռեց անգլիական պարլամենտին այդ կռիւն յայտարարել: Նա ասաց. «Քանի որ Անգլիան թող չի տալիս Իրլանդիային կառավարել իր սեփական գործերը, Իրլանդիան էլ իր կողմից կարող է խանդարել, մինչև անգամ անհնարին դարձնել անգլիական կառավարչական մեքենայի կանոնաւոր գործունէութիւնը: Իրլանդիան այդ կարող է անել իր պարլամենտական կուսակցութեան միջոցով: Այդ կուսակցութիւնը Իրլանդիայի շահերը յաջողութեամբ պաշտպանելու համար չըպէտք է բաւականանայ թէօրեալական, աննպատակ բողոքներով տալին մի կամ երկու անգամ, օրոնք յառաջ են բերում միայն անպտուղ հռետորական սուրնիրներ, այլ նա պէտք է ձգտի իւրաքանչիւր բոլոր իր գոյութիւնը զգալ տայ պարլամենտին, մասնակցելով նրա բոլոր պարապմունքներին, ամեն անգամ նրա առաջին դնելով Իրլանդիայի պահանջները: Իրլանդական կուսակցութիւնն իր եռանդուն գործունէութեամբ պէտք

է ցոյց տայ պարլամենտին, որ նրա, պարլամենտի, կանոնաւոր գործունէութիւնը կուսակցութիւնն անհնարին կրդարձնի միշտ, մինչև որ Իրլանդիան իրագործված չի տեսնիլ իր կենսական պահանջները:» Պարլամենտի ու կառավարութեան կանոնաւոր գործունէութեան խանգարելը Պարնէլլն ընտրեց իբրև մի գորաւոր միջոց, որով նա կարող էր առաջ մղել իր ժողովրդի պահանջներն ու պարլամենտի ուղղութիւնը հրաւիրել նրանց վրա: Այդ նպատակով 1877 թ. նոտաշրջանի հէնց սկզբից նա սկսեց դիմել «օբստրուկցիօնիզմի» օգնութեան: «Օբստրուկցիօնիզմը» ծնունդ է ստացել Անգլիայում: Նա մի միջոց է, որով պարլամենտական հոետօրները իրանց համար մի անհաճելի օրէնագծի քննադատութիւնը ձգձգում են, նրա աւիթով երկար ու ձիգ ձառեր արատաւնելով: Շատ անգամ պատահում է, որ «օբստրուկցիօնիզմի» շնորհով մի որ և իցէ օրէնագծի քննադատութիւնը չի վերջանում մինչև նոտաշրջանի վերջը: Կառավարութիւնն ըստ զոյութիւն ունեցող օրէնքի յետ է վերցնում այդպիսի օրէնագիծը, և եթէ նա յանկութիւն ունի անպատճառ իրագործված տեսնել օրէնագիծը, հետեւեալ նոտաշրջանին պէտք է նորից մտցնի նրան, որն այդ անգամ էլ պէտք է անցնի քննադատութեան բոլոր ֆազիսներով և որը կարող է կրկին «օբստրուկցիօնիզմի» զսՀ գնալ: Երբ մի որ և է օրէնագիծ զոՀ է գնում «օբստրուկցիօնիզմի» ու մի նոտաշրջանում չի անցնում, հետեւեալ նոտաշրջանին շատ հազիւ է պատահում, որ կառավարութիւնը նրան կրկին մտցնի: Այդ դէպքում նա իրան յաղթված տեսնելով, բոլորովին յետ է վեր-

ցնում իր առաջարկած օրէնագիծը: «Օբստրուկցիօնիզմի» միջոցով յաղթութիւն տանելը հոետօրից մեծ ընդունակութիւններ է պահանջում: Հարկաւոր է ժամերով խօսել և Բրիտանիայի հարկաւոր ընտրեալներին ուղղութիւնը որոշ հարցի վրա կենտրօնացնել: Պարլամենտական կուլի այդ ձևով յաղթանակ տանելը մատչելի է այնպիսի հոկաներին միայն, ինչպէսին էր Պարնէլլը:

«Օբստրուկցիօնիզմի» աներեակայելի ցոժ ստացաւ Պարնէլլի ժամանակ. այն ժամանակուայ պարլամենտական կանոնադրութիւնը, որը վերջերս մի քանի փոփոխութիւնների ենթարկվեց, նրա զարգացման ոչ մի արգելք չէր գնում: Մինչև Պարնէլլի ապարէզ դուրս գալն այդ միջոցին դիմում էր իրլանդացի պատգամաւոր Բիդգարը, որը ոչ մի նշանաւոր աջակից չունենալով, աչքի ընկնող յաջողութիւն չէր ունենում: Պարնէլլը, գնահատելով Բիդգարի եռանդը, ձեռք մեկնեց նրան ու արագ քայլերով սկսեց դիմել իր նպատակներին: Նրա սկսած կատաղի կուլին անգլիական պարլամենտի դէմ իր հարուածների ծանրութիւնը զգալի դարձրեց անգլիացիներին առաջին անգամ 1877 թ. նոտաշրջանի ժամանակ, երբ երկիրը կառավարում էր պահպանողական Դիզրայէլի մինիստրութիւնը:

Այդ թւի մարտին պարլամենտում քննադատվում էր բանտերին վերաբերեալ մի կարեւոր օրէնագիծ, որի երկրորդ ընթերցանութիւնից յետոյ Պարնէլլը մի քանի անգամ խօսք պահանջեց, խիստ քննադատութեան ենթարկելով պահպանողականների քաղաքականութիւնը: Վերջիններս, սաստիկ զայրացած, կրա-

րում էին նրա խօսքը, բայց նա շարունակում էր աջ ու ձախ անխնայ հարուածել: Պարնէլլը յետոյ խօսք պահանջեց Բիդդարը, որից յետոյ դարձեալ մի քանի անգամ տեղից վեր կացաւ Պարնէլլն ու շարունակեց խօսալ: Այդ օրուան օրսարուկցիօնիզմն այն հետեանքն ունեցաւ, որ կառավարութիւնը, ցանկութիւնն ունենալով շուտ վերջացնել յիշեալ օրէնագծի քննադատութիւնը, ընդունեց իրլանդացի պատգամաւորների պահանջը՝ յետաձգել քննադատութիւնը միւս օրուան, քանի որ արդէն զիշերուան ժամի 3-ն էր, իսկ նիստը դեռ շարունակվում էր: Պարնէլլն հէնց այդ էր ցանկանում: Կառավարութեան այդ զիջումը նրա համար կատարեալ յաղթութիւն էր: Դիզլայէլն իր այդ փոքրիկ պարտութիւնը վատ նշան համարելով ու ցանկանալով, որ այլ ևս այդպիսի երեւոյթներ չըրկնվեն՝ պարլամենտում, մի նամակով զիմեց իրլանդական կուսակցութեան պարագլուխ Բեօտսին, որի մէջ բողոք էր յայտնում նրա կուսակցութեան «մի քանի երիտասարդ անդամների» դործունէութեան դէմ: Բեօտար փորձեց սանձահարել իր անդուստ աշխատակիցներին, բայց անաջող: Պարնէլլը յայտնեց նրան, որ նա, Պարնէլլը, իրլանդական ժողովուրդի ազատ կամքով ընտրված անկախ պարլամենտական կուսակցութեան անդամ է, այլ ոչ թէ մի որ և է վարչութեան ստորադրեալ պաշտօնեայ: Բեօտսի անտակա քայլն այն հետեանքն ունեցաւ, որ Պարնէլլն միացան իրլանդական կուսակցութեան մի քանի ուրիշ անդամներ:

Այդ դէպքից մի քանի ամիս անցած Պարնէլլը պարլամենտում մի փոթորկալից նիստի հերոս հան-

դիսացաւ: Յուլիսի 25-ին հարաւային Աֆրիկայի դործերին վերաբերեալ մի օրէնագծի քննադատութեան ժամանակ, որի պատճառով յետոյ արիւնահեղ պատերազմ ծագեց բօէրների ու զուլուաների մէջ, ազատամիտ կուսակցութեան անդամ Ջէնկիսի վրա պահպանողականները վիճաբանութիւնների ժամանակ մեղադրանք բարձեցին, թէ նա, Ջէնկիսը, իջարն է դործ զնում պարլամենտական ազատութիւնը: Ջէնկիսը, բողոքելով այդ մեղադրանքի դէմ, պահանջեց, որ իր մեղադրողների խօսքերն արձանագրութեան մէջ մտցնվեն: Նրա այդ պահանջը մեծ եռանդով պաշտպանեց Պարնէլլը, որն ի միջի այլոց ասաց. «Ես կարծում եմ, որ այսուհետեւ այլ ևս անհնարին է համբերել... Պարլամենտի յարգելի անդամների մեծամասնութիւնը մեր համբերութեան սահման է դրել իր այն քստմենի մեղադրանքներով, որոնց նա հարկաւոր համարեց ուղղել իմ ու ինձ հետ համերաշխ դործող պատգամաւորների հասցէին»: Կառավարութեան լիազօր (լիդեր) ու պահպանողականների պարագլուխ Նորսկօտը իսկոյն և եթ տեղից կանդնեց ու պահանջեց, որ Պարնէլլի խօսքերը նոյնպէս մտցնվեն արձանագրութեան մէջ: Նախ քան կառավարութեան այդ պահանջը կատարելն ժողովի նախագահը առաջարկեց Պարնէլլին յետ վերցնել իր խօսքերը: Այն ժամանակ Պարնէլլը տեղից կանդնեց և, ուշ չըդարձնելով իր հակառակորդների բարձրաձայն աղմուկին, անվեհերութեամբ ասաց հետեւալը. «Իբրեւ իրլանդացի, իբրեւ ներկայացուցիչ այն թըշուառ երկրի, որն անկարագրելի վերքեր ու տանջանքներ է կրում շնորհիւ անդլիացիների միջամտու-

Թեան նրա ներքին գործերում, շնորհիւ անդլիացի-
ների անդթուութեան ու բռնակալութեան, ես մի ա-
ռանձին բաւականութիւն եմ զգում խանդարել
կառավարութեան պիտաւորութիւնները ներկայ օրէ-
նագծի քննադատութեան վերաբերմամբ»:

Այդ խօսքերն աննկարագրելի փոթորիկ առաջ
բերան. շատերն իրանց տեղերից ցատկելով, բռնուցք-
ներ կ'ին ցոյց տալիս Պարնէլլին: Պարլամենտը ծովի
նման ալեկոծվում էր. «անհաշտ թշնամի», «քստրմ-
նելի գաւաճան», «արիւնարբու Ֆէնի» ու այլ նոյնա-
նման դարձուածներ առատութեամբ թափվում էին
Պարնէլլի զլխին: Երբ փոթորիկը փոքր ինչ հանդար-
տուեց, Նորսկոտտը տեղից կանգնեց ու առաջարկեց,
որ Պարնէլլի խօսքերն արձանագրվին ու իսկոյն և
եթ պարլամենտի քննադատութեան ենթարկվեն:
Վերոյիշեալ օրէնագծի քննադատութիւնն ընդհատ-
վեց ու ժողովն անմիջապէս զբաղվեց Նորսկոտտի
առաջարկութեամբ: Վերջինս կարծում էր, թէ հասել
է յարմար բոլորէն Պարնէլլին պատասխանատուութեան
ենթարկելու, ուստի առաջարկեց ժողովին՝ մի շա-
բաթ ժամանակով զրկել Պարնէլլին պարլամենտա-
կան պարապմունքներին մասնակցելու իրաւունքից:
Այն ժամանակ ժողովի նախագահը, սպիկէրը, զիմեց
Պարնէլլին, առաջարկելով նրան բացատրութիւն
տալ իր խօսքերի մասին: Նախ քան իր արտասանած
խօսքերի իմաստը բացատրելը, նա սկսեց մանրամաս-
նաբար քննադատել պարլամենտական գործավարու-
թեան ձեւերը, իսկ երբ սպիկէրը յիշեցրեց նրան, որ
նա բուն հարցից փախուստ է տալիս, այն ժամանակ
Պարնէլլը զիմեց ժողովին աւելի կծու ու համարձակ

նկատողութիւններով: Իր ճառը վերջացնելով, նա,
համաձայն պարլամենտում ընդունված սովորութեան,
թողեց դահլիճը, որտեղ պէտք է զբաղվէին նրա
գործի քննութեամբ: Իր յետեւից ունենալով պահ-
պանողական մեծամասնութեան անդուսպ աղմուկ-
ներն ու կատաղի յիշոյնները, Պարնէլլը զուրս զնաց
դահլիճից ու բարձրացաւ պարլամենտի վերին յար-
կում գանվող «սպիկէրի վերնատուն» կոչվող օթ-
եակը, որտեղից նա ղիտել սկսեց, թէ ինչ վախճան
կունենայ իր գործի քննութիւնը:

Նորսկոտտի առաջարկութիւնը ձեւակերպված էր
այսպէս. «Աչքի առաջ ունենալով որ պ. Պարնէլլը
զիտակցաբար ու տոկունութեամբ աշխատում է խան-
դարել գործերի կանոնաւոր ընթացքը, որով նա
յանցանք է գործում պարլամենտի պէմ ստորացնե-
լով նրա արժանաւորութիւններն ու զցիւլով նրա
վարկը,—նա, պ. Պարնէլլը, զրկվում է ժողովարանի
պարապմունքներին մասնակցելու իրաւունքից մի շա-
բաթ ժամանակով, մինչև հետեւեալ ուրբաթ օրը»:
Այդ առաջարկութեան քննադատութիւնը բոլորովին
անսպասելի կերպարանք ընդունեց: Պարլամենտի
անդամներից շատերը չէին կարող չըյիշել, որ ներկայ
պահպանողական մեծամասնութեան ներկայացուցիչ-
ները, իրբ Գլադստօնի միւնիստրութեան ժամանակ
(1868—1874) ընդիմադիր կուսակցութեան շարքե-
րում էին գանվում, կառավարութիւնը տապալելու
համար նոյն միջոցներին, համարեա նոյն կծու դար-
ձուածքներին էին ղիմում, որոնք լսվում են այժմ
Պարնէլլից: Բացի այդ, որ ամենագլխաւորն է, Պար-
նէլլի խօսքերի բազմակողմանի քննադատութիւնը

պարզեց, որ նա պարլամենտում ընդունված ձևերին հակառակ ոչ մի քայլ իրան չի թողլ տուել: Նա սասց, որ «մի առանձին բաւականութիւն է զգում խանդարել զխաւորութիւնները» ոչ թէ պարլամենտի, որն իրաւ կարող էր յանցանք համարվել նրա դէմ, այլ «կառավարութեան», որը բոլորովին իրաւացի ու բնական ձգտում է ընդիմադիր կուսակցութեան իւրաքանչիւր անդամի կողմից: Այդ խորհրդակցութիւնից յետոյ պարլամենտն անհնարին դատաւ կատարել կառավարութեան ներկայացուցիչ Նորսկօտի պահանջը: Կառավարութեան գրութիւնն անելանելի էր. նա կատարեալ պարտութիւն էր կրում: Այդ դժուար գրութիւնից ազատելու համար ժողովականների մեծամասնութիւնը վճռեց Նորսկօտի բարձրացրած հարցը յետաձգել մինչև հետեւեալ ուրբաթ օրը, որն այդպիսով մշտական մոռացութեան մատնվեց, ի հարկէ: Երբ սպիկերը յայտնեց ժողովի վճիռը, Պարնէլլե կողմնակիցները բուն ծափահարութիւններով դուրս թռան դահլիճից ու ոգևորված աղաղակներով առաջնորդեցին Իրլանդիայի «անթագակիր թագաւորին» «սպիկերի վերնատանից» դէպի նիստերի դահլիճը, ուր նրանց ցոյցերը չափ ու սահմանն անցան: Նախագահը, նիստը փակելով, վերջ դրեց աներևակայելի աղմուկին:

Նորսկօտի առաջարկութեան մերժումը մի փայլուն, անօրինակ յազմանակ էր Պարնէլլե համար: Նրա ժողովրդականութիւնն մեծ արագութեամբ աճում էր Իրլանդիայում: Նա աւելի ևս համոզվեց, թէ «օրստրուկցիսնիզմը» ինչ մեծ զէնք էր իր ձեռքում, և այդ զէնքով նա աւելի վառ եռանդով սկսեց

առաջ մղել իր սկսած վճռական կռիւը: Բացի Բիդգարից նա ունէր այդ ժամանակ Հինգ անձնուէր ղինակիցներ. այդ եօթը հոգուց բաղկացած փոքրիկ խումբը հրաշքներ էր գործում շնորհիւ իր կրակոտ առաջնորդի: Նոյն 1877 թ. յուլիս ամսում Պարնէլլին յաջողվեց կրկին անգամ զգալ տալ պարլամենտին իր սոսկալի յոյժը: Յուլիսի 31-ի նիստը, որում քննվում էր նոյն աֆրիկական օրէնագիծը, շարունակվեց ամբողջ քսան վեց (26) ժամ անընդհատ. համարեա բոլոր ժամանակ խօսում էր Պարնէլլ վիթխարին, որի աեղ երբեմն միայն խօսում էին նրա ընկերները, երբ նա հանդիստ էր առնում:



Պարնէլլե փոքրիկ խմբի եռանդուն գործունէութիւնը, զնալով, աւելի ու աւելի էր գրաւում դէպի իրան Իրլանդիայի ազգաբնակչութեան համակրութիւնը: Ինչպէս վերեն ստացինք, Պարնէլլե ժողովրդականութիւնն անօրինակ կերպով առաջ էր գնում, որն, ի հարկէ, շատ կարեւոր էր նրա պաշտպանած գործի համար: 1877 թ. օգոստոսի 21-ին Պարնէլլը Բիդգարի հետ այցելեց Դուբլինը, որտեղ ժողովրդի ահագին բաղմունքիւն «Բօտոնդա» դահլիճում ոգևորված ցոյցեր արեց նրանց: Պարնէլլին իր ճառով աւելի ևս վառեց ժողովրդի զգայմունքները: Այդ օրից սկսվեց նրա գործունէութեան ամենափառաւոր շրջանը հայրենի հողի վրա: Այդ օրուայ ժողովը պարզեց ամենքի համար, որ հասել էր րոպէն, երբ իրլանդական ժողովուրդը պէտք է վճռի՝ ո՞ւմ ետեւից գնալ.

դիւցաղն Պարնէլլը, թէ անդոյն, անընդունակ Բեօտ-
տի: Վերջինս էլ լաւ հասկանում էր, որ անհրաժեշտ
է այդ հարցը վճռել ու վերջ տալ անորոշ դրու-
թեան, ուստի հրապարակով պատրաստականութիւն
յայտնեց թողնել իսկոյն և եթ կուտակցութեան պա-
րազլիի դերը, եթէ Իրլանդիան իրան կողմնակից
կը յայտարարի Պարնէլլի քաղաքականութեան: Այդ
հարցը եթէ ոչ վերջնականապէս վճռելու, գոնէ
պարզելու համար 1878 թ. յունվարին Դուբլինում
իրլանդական գործիչների ժողով կազմվեց: Ժողովում
Բեօտաք, պարզելով իր ծրագիրը, արտասանեց մի
բաւականին անդոյն ճառ, որը վերջացրեց հետեւեալ
խօսքերով. «Ես լիովին համոզված եմ, որ իրլանդա-
կան կուսակցութեանը կը յաջողվի համոզել անաչառ
անդլիացիներին, որ Իրլանդիային անհրաժեշտ է
շնորհել ինքնավարութիւն:» Պարնէլլն անմիջապէս
խօսք խնդրեց ու ասաց ի միջի այլոց հետեւեալը.
«Եթէ ես այսօր թոյլ չեմ տալիս ինձ առաջարկել
երկրին գործունէութեան այս կամ այն եղանակը, այս
կամ այն յատուկ քաղաքականութիւնը և մինչև
անգամ հրաժարվում եմ ներկայ ժողովի հայեցողու-
թեան առաջարկել այս կամ այն հարցը,—այդ միայն
այն պատճառով, որ ես գեռ երիտասարդ եմ ու կա-
րող եմ սպասել: Կարծում եմ, որ երկիրն էլ կարող
է սպասել. այն երկիրը, որը մինչև այժմ զարմանալի
համբերութեամբ տարել է իր ուսերի վրա թշուա-
ռութեան ծանր լուծը, մի առ ժամանակ էլ կարող
է համբերութիւն ունենալ... Պ. Բեօտաք բաւականին
լոյս սփռեց այն քաղաքականութեան վրա, որին նա
հետեւել է վերջին չորս տարուայ ընթացքում: Ես

ուրախութեամբ կը համաձայնվէի նրա հետ, եթէ նոյն
կարծիքն ունենայի անդլիացիների մասին. հնարաւոր
և մինչև անգամ շատ հաւանական է, որ նրան կը-
յաջողվի համոզել անաչառ անդլիացիներին շնորհել
Իրլանդիային ցանկալի ինքնավարութիւնը, բայց
զգաւորաբար ես չեմ կարծում, որ համայնքների ժո-
ղովն երբ և իցէ անաչառ անդլիացիներից բաղկացած
մեծամասնութիւն ունենայ. հէնց այդ անաչառներն
այնտեղից բացակայ են, և հազիւ թէ յաջողվի նրանց
մուտք գործել այնտեղ: Եթէ մենք պարլամենտում
գործ ունենայինք այնպիսի մարդկանց հետ, որոնք
ընդունակ լինէին ուշք դարձնել արդար պահանջների
վրա, այն ժամանակ, ի հարկէ, կարելի էր յուսալ,
որ պ. Բեօտաքի քաղաքականութիւնը յաջող էլ ք
կունենայ. բայց մենք գործ ունենք ոչ թէ մարդկանց
հետ, այլ կուսակցութիւնների, որոնք իրանց նեղ
կուսակցական շահերն ամեն բանից վեր են դասում:»
Փոխադարձ զեջումների շնորհով ժողովին յաջողվեց
համաձայնութիւն կայացնել կուսակցութեան ան-
դամների մէջ: Ժողովը, թողնելով Բեօտաքին կուսակ-
ցութեան պարագլուխ, հասկացրեց նրան, որ նա իր
քաղաքականութեան պէտք է աւելի եռանդուն բնա-
ւորութիւն տայ. բացի այդ ժողովն ընդունեց Պար-
նէլլի հետեւեալ առաջարկութիւնը. «Իրլանդական
կուսակցութեան անդամները պարլամենտական գոր-
ծավարութեան շրջանում իրաւունք ունեն օգուել
լիովին ազատութեամբ այն հարցերի վերաբերմամբ,
որոնք անմիջական կապ չունեն կուսակցութեան զըլ-
խաւոր ծրագրի հիմնական կէտերի հետ:

Այդ համաձայնութեան հետեանքն այն եղաւ, որ 1878 թ. նոտաշրջանի ժամանակ Պարնէլլը շարունակեց գործել բոլորովին ինքնուրոյն կերպով, առանց մի րոպէ տատանվելու իր մի անգամից ընդ միշտ ընդունված քաղաքականութեան մէջ:

1879 թ. մայիսին Բեօտոր վախճանվեց. նրա անձնաւորութեամբ անհետացաւ Պարնէլլի միակ աչքի ընկնող հակառակորդը: Իրլանդական զործերի ղեկն անցաւ Պարնէլլի ձեռքը:

XX.

1879 թ. Պարնէլլի գործունէութիւնը կենտրոնացաւ զլիսաւորապէս պարլամենտից դուրս Իրլանդիա յում, ուր նա իրան յատուկ եռանդով զբաղվեց հոգային հարցով: Այդ հարցը նոր չէր ծնունդ առնում: 1879 նա իր զոյութիւնը նոր ոյժով զգալ տուեց զեանախնձորի բերքի պակասութեան սրտաճառով. զեանախնձորն Իրլանդիայի թշուառ զիւղաբնակ ազգաբնակչութեան ամենազլիսաւոր ուսելէքն է: 1879 թ. յունիսին Պարնէլլն երեւեցաւ Իրլանդիայի յում ու սկսեց իր հոչակաւոր «հոգային ազիտացիան»:

Մի քանի տարի շարունակ նա թռչում էր Իրլանդիայի մի անկիւնից միւսը. ամեն տեղ բազմամարդ միախնդրելով ճառախօսում էր ամբողջ ժամերով, մասնաւորաց անելով ժողովրդին այն միջոցների վրա, որոնցով կարելի է վճռել հոգային հարցը: Նա խորհուրդ էր տալիս երկրագործներին (Ֆէրմերներին) միանալ ու պահանջել հողատէրերից՝ փոքրացնել

հողավարձը, ընտան. այդ նպատակին հասնելու համար ընդհանուր համաձայնութեամբ պէտք է ընդհատէին նրանք հողավարձի հատուցումը, որով կարող էին ստիպել լէնդ-լորդերին կատարել երկրագործների արգարացի պահանջը: Նա հաւատացնում էր հողավուրկ ժողովրդին, որ զործունէութեան այդ եղանակը վերջ ի վերջոյ կը ստիպի ում հարկն է մտածել՝ թէ լաւ չի լինիլ արդեօք հողը յանձնել նրա մշակողներին, որոնց արիւն քրախիքի շնորհով է միայն հողը պտուղ տալիս:

1879 թ. եռանդուն հոգային ազիտացիայի հետեանքն այն եղաւ, որ Իրլանդիայում հիմնվեց մի նոր վեթխարի ընկերութիւն, որը կոչվեցաւ «Իրլանդական հոգային միութիւն»: Նա նպատակ ունէր լայնացնել իրլանդական ժողովրդի հոգային իրաւունքները և ժամանակով նրան իր հոգի տէրը դարձնել: Նոր ընկերութեան յաջող գործունէութեան համար հարկաւոր էին նիւթական ահաղին միջոցներ. այդ պատճառով Պարնէլլը կուսակցութեան կողմից յանձնարարութիւն ստացաւ գնալ Հիւսիսային Ամերիկա փող հանգանակելու: Ամերիկայում Պարնէլլը մեծ յաջողութիւն ունեցաւ. նա ճառախօսեց քառասունից աւել բազմամարդ ժողովներում և այդպիսով մեծ հետաքրքրութիւն առաջ բերեց դէպի իրլանդական հարցը: Պարնէլլի փառաւոր զործունէութեան պսակն Ամերիկայում եղաւ այն, որ նա հրաւեր ստացաւ ճառ արտասանելու Իրլանդիայի դատի մասին Միացեալ Նահանգների զերագոյն օրէնսդրական ժողովում, կոնգրէսում, որի անդամները Պարնէլլի ճառի թէ սկզբում և թէ վերջում ոգեորված ցոյ-

յեր արին նրան: Միտցեալ Նահանգներէյ Պարնէլլն անցաւ Կանադա, բայց այնտեղ նա չըկարողացաւ երկար մնալ, որովհետեւ ստացաւ մի բոլորովին անսպասելի լուր. այնտեղ նա լսեց, որ պահպանողական պարլամենտը լուծվել է ու նշանակվել են նոր ընդհանուր ընտրութիւններ: Պարնէլլը տեսաւ, որ վըճռական ընտրութիւններ, որ ստիպեցին նաև նստեց ու ճանապարհվեց Իրլանդիա, ուր շուտով ափ իջաւ ու սկսեց ընտրողական ագիտացիան: Նա նա զիշեր-ցերեկ աշխատում էր, գրում էր, խօսում էր միտինգներում, հրահանգներ էր տալիս իր զինակիցներին ու անդադար խրախուսում էր ժողովուրդին:

Պարնէլլն ճանապարհորդութեան նիւթական հետեւանքներն էլ շատ աջող էին. նա Ամերիկայից բերաւ 720000 ր. (72000 ֆ. սա.), որն իրլանդացիները լիովին թողեցին նրա կարգապարութեան ներքոյ: Պարնէլլն այդ դումարը յատկացրեց սովատանջներին օգնելու գործին ու հողային և առհասարակ ազդային շարժման զանազան պէտքերին:

1880 թ. ընդհանուր ընտրութիւնները վերջացան Գլադստօնի ազատամիտ կուսակցութեան յաղթութեամբ: Գլադստօնի թողեց կառավարութեան ղեկը, որն անցաւ Գլադստօնի ձեռքը: Վերջինիս հինգամեայ (1880—1885 թ.) կառավարութիւնը մեծ տեղ է բռնում իրլանդական հարցի պատմութեան մէջ, քանի որ այդ ժամանակամիջոցում Անգլիայի քաղաքականութիւնը դէպի Իրլանդիան հիմնովին փոխ-

վեց, ստանալով իրլանդացիներին յանկալի ընթացք: Ազատամիտ կուսակցութիւնն ու նրա արդարաւէր ղեկավարը կամաց-կամաց եկան այն համոզմունքին, որ անհրաժեշտ է պետութեան միութիւնը չըխախտելու համար շնորհել Իրլանդիային ինքնավարութիւն իր ներքին գործերը կառավարելու համար: Ազատամիտ կուսակցութեան այդ համոզմունքը հետեւանք էր ոչ թէ խաղաղ աշխատանքի ու թէօրեափական եղբակցութիւնների, այլ այն անողորմ կռիւի, որն այդ կուսակցութիւնը մղեց իրլանդական կուսակցութեան դէմ: Այդ կռիւը ցոյց տուեց նրանց, թէ որքան անօգուտ ու մինչև անգամ ֆլաստկոր է այն քաղաքականութիւնը, որը դուրի է որ և է բարոյական արժանաւորութիւնից, որի զլխաւոր յատկանիշը կոպիտ ֆիզիքական ոյժն է: Տեսնելով, որ իր ընտրած ճանապարհը վաղուշ կըտանի դէպի արիւննահեղ յեղափոխութիւն, ազատամիտ կուսակցութիւնն ու նրա հանձարեղ պարագլուխ Գլադստօնը յանուն արդարութեան մի րոպէ անգամ չըտատանվեցին՝ թողնել բռնի ոյժի քաղաքականութիւնն ու իրանց ձեռքն առնել իրլանդական հարցի արդարացի լուծումը: Այդ վճռական քայլն անելով, ազատամիտ կուսակցութիւնը մեծ ծառայութիւն մատուցեց ոչ թէ միայն Իրլանդիային, այլ և առաջադիմութեան ու ազատութեան գործին առհասարակ, հետեւապէս և համայն մարդկութեան: Այդ մեծ գործն ուղղակի հետեւանք էր այն տենդային գործունէութեան, որը ցոյց տուեց Պարնէլլը Գլադստօնի երկրորդ մինիստրութեան ժամանակ (1880—1885 թ.): Հիմա տեսնենք, թէ ինչպէս ազատամիտ կուսակցութիւնը փո-

խնայ իր քաղաքականութիւնը դէպի Իրլանդան ու
ինչ գեր խաղաց Պարնէլլն այդ գործում:

1880 թ. նորընտիր պարլամենտը, որը կառավա-
րութեան ղեկն անմիջապէս յանձնեց Գլադսթոնին,
ըստ սովորականին, բացվեց զահական ծառով, որի
մէջ Իրլանդիային ոչ մի բարենորոգութիւն չէր խոս-
տացված: Պարնէլլն այդ ծառի ընթերցումից յետոյ
զիմեց պարլամենտին մի առաջարկութեամբ, որով
պահանջում էր մի շարք նոր օրէնքներ Իրլանդիայի
անասնոցի պարտութիւնը թեթեւացնելու համար: Այդ
առաջարկութիւնը առաջ բերեց երկար ու տաք վե-
ճաքանութիւններ, որոնց ժամանակ Իրլանդիայի կա-
ռավարիչ Փորստէրը յայտնեց, որ այդպիսի օրէնա-
գծեր մշակելու ու քննելու ժամանակ չունի պարլա-
մենտը ներկայ նստաշրջանի ընթացքում: Իրլանդիայի
միւս պատգամաւորները յայտնեցին, որ եթէ պար-
լամենտը ժամանակ չունի երկրի զբոսնական լեռնին
բարեօրոյն հարցով զբաղվել, հողային հարցի վերա-
բերմամբ նոր օրէնքներ մշակել, գոնէ նա պարտաւոր
է յանձնարարել կառավարութեան ժամանակաւոր
միջոցներ ձեռք առնել լէնդ-լորդերին փոքր ինչ սան-
ձահարելու համար, որոնք, գնալով, աւելի ու աւելի
խիստ են վարվում երկրագործների հետ, ամբողջ
խմբերով արտաքսելով նրանց իրանց օղորմելի խր-
ճիթներից հողավարձն իր ժամանակին չըվճարելու
պատճառով: Փորստէրը պատասխանեց, որ քանի
հողային յարաբերութիւնների մէջ գործող օրէնս-
դրութիւնը գոյութիւն ունի, կառավարութիւնը ոչ
մի յանձնարարութիւն հակառակ այդ օրէնսդրու-
թեան իմաստին պարլամենտից չի ընդունիր, ուստի

նա, Փորստէրը, խորհուրդ է տալիս հակառակ կող-
մերին իրանց փոխադարձ յարաբերութիւնների մէջ
չափաւորութեան սահմաններից դուրս չըգալ երբէք:
Վիճաքանութիւններից յետոյ իրլանդացիների պա-
հանջը ձայների ահազին մեծամասնութեամբ մերժ-
վեց: Հոմբուրականների թիւը, որոնց զլուխն էր ան-
ցած Պարնէլլը, այդ ժամանակ արդէն 65-ին էր
հասնում: Այդ անյաջողութիւնը թերահաւատութիւն
ծագեցրեց իրլանդացիների մէջ դէպի Գլադսթոնի
ազատամիտ կառավարութիւնը, աւելի ևս տոկունու-
թիւն տուեց նրանց ու ստիպեց աւելի ևս պահան-
ջող լինել: «Պահանջելով, այլ ոչ թէ խնդրելով մենք
կարող ենք ստիպել կառավարութիւնը փոխել իր
քաղաքականութիւնը դէպի Իրլանդիան», — յաճախ
ասում էր Պարնէլլը:

Փորստէրի տարած յաղթութիւնից յետոյ իրլան-
դացիները մի նոր օրէնագիծ առաջարկեցին պարլա-
մենտի քննադատութեան, որի նպատակն էր երկրա-
գործներին արտաքսելու առաջն առնել: Կառավարու-
թիւնն սկզբում համակրութիւն չըցոյց տուեց այդ
օրէնագիծին, բայց տեսնելով իրլանդացիների հաս-
տատամտութիւնը, հարկաւոր համարեց մի քանի
զիջումներ անել նրանց ու առաջարկեց պարլամենտին
մի օրէնագիծ, որով արգելում էր, թէև ոչ անպայ-
ման, երկրագործների արտաքսելը հողից, եթէ հողա-
վարձի չըվճարելը հետեանք է հունձի պահածութեան:
Զրնայած պահանջողականների բուռն ընդդիմադրու-
թեան, օրէնագիծը համայնքների ժողովում ընդուն-
վեց ու անցաւ լորդերի ժողովը, որը մերժեց նրան
ձայների ահազին մեծամասնութեամբ: Լորդերի պա-

լատի այդ վարմունքը մեծ իրարանցում առաջ բերեց Իրլանդիայում և պատճառ դարձաւ հողային ազիտացիայի զօրեղանալուն, որի առաջն կառավարութիւնն անգոր էր առնել: 1880 թ. սեպտեմբերին Իրլանդիայի էննիս քաղաքում կազմած մի բազմամարդ միտինգում Պարնէլը ձեակերպեց ազիտացիայի նպատակները, յայտնելով, որ Ֆէրմերների հաստատամտութիւնից է կախված հողային փրկարար օրէնքների ձեռք բերելը, ուստի նրանք պէտք է համախմբվեն ու գործեն անպայման համերաշխութեամբ: Պարնէլն ու նրա մօտիկ աշխատակիցների առաջնորդութեամբ հողային շարժումն յաջողութեամբ շարունակում էր իր ընթացքը: Նրանց խորհուրդով Իրլանդիայում սկսեց գործադրվել հողային ազիտացիայի մի նոր սիստեմ, որը կոչվեցաւ «Բօյկօտ». նրա նպատակն էր եռանդուն միջոցներով զինաթափ անել ժողովրդի տնտեսական շահերի ռեսուրսը թշնամիներին: «Բօյկօտը» նմանվում էր բանւորական գործադուլին և զլխաւորապէս կայանում էր նրանում, որ երկրագործները, ահապին դաշնակցական ընկերութիւններ կազմելով, մերժում էին լէնդլօրդերին հողավարձ վճարել: Շարժումն առհասարակ օրինական միջոցներով էր իր նպատակին դիմում: Պարնէլն ու նրա ընկերները միշտ խորհուրդ էին տալիս Ֆէրմերներին օրինականութեան սահմաններից երբեք չհրուրս դալ, բայց շատ անգերում սովատանջ, մերձիմահ ժողովուրդը ուշ էր դարձնում նրանց խելացի խորհուրդների վրա, ուստի յաճախ պատահում էին քրէական յանցանքներ, մարդասպանութիւններ, որոնց զօհ էին դնում բռնակալ հողատէրերը:

Անուշադիր թողնել այդ դէպքերը կառավարութիւնն, ի հարկէ, չէր կարող, ուստի Իրլանդիայում կարգը վերականգնեցնելու համար նա վճռեց ղիմել խիստ միջոցների: Նախ քան այդ քայլն անելը կառավարութիւնը 1880 թ. նոյեմբերին վճռեց դատի ենթարկել հողային շարժման ղեկավարներին, այսինքն Պարնէլին, Դիլլօնին, Բիդդարին, Դէվիտտին և Սեկտօնին, որոնց նա մեղադրում էր աղագրեակութիւնը դէպի յանցանքներ զրգելում: Դատը, ի մեծ ցաւ կառավարութեան, վերջացաւ մեղադրեալների կատարեալ յաղթանակով. երդուեալների դատարանը նրանց արդար ճանաչեց: Նրա այդ վճիռը աւելի ևս գօրեղացրեց Պարնէլի ժողովրդականութիւնը, իսկ ազատամիտ կառավարութեան ստիպեց ղիմել խիստ միջոցների: 1881 թ. յունվարի 6-ին պարլամենտական նստաշրջանի սկզբում գահական ծառի մէջ կառավարութիւնը յայտարարեց, որ Իրլանդական շարժումը սանձահարելու համար հարկաւոր են խիստ միջոցներ, յատուկ օրէնքներ, և յոյս ունի, որ պարլամենտն այս դէպքում օգնութեան կրգայ նրան, կառավարութեան: Պարնէլն իր շուրջը հաւաքեց իր բոլոր հաւատարիմ ընկերներին ու սկսեց եռանդով բողոքել խիստ միջոցների դէմ: Կոիւն աւելի սուր ընթացք ստացաւ յունվարի 24-ին, երբ Ֆորստէրը պարլամենտի քննադատութեան առաջարկեց մի օրէնագիծ, որով Իրլանդիայի տեղական վարչութեան համարեա անսահման իրաւունք էր տրվում առանց դատարանի խիստ պատասխանատւութեան ենթարկել այն բոլոր անձանց ու ընկերութիւնները, որոնց նա կրկոսկածէր որ և է յանցաւոր զիտում:

ների մէջ: Այդ օրէնագիծն Իրլանդիայի վարչութեան կառայականութեան չափ ու սահմանը ոչնչացնում էր, ուստի իրլանդացի պատգամաւորները վճռեցին ամեն կերպ ընդիմադրել նրա ընդունելութեան: Մի ամբողջ շաբաթ շարունակվեցին վիճաբանութիւնները. տեղի ունեցան դէպքեր, որոնց նմանը չէ կարելի գտնել պարլամենտի անցեալ պատմութեան էջերում: Պանէլլը լարեց իր հանձարի բոլոր ոյժերը: Նա ամբողջ ժամերով խօսում էր, աջ ու ձախ հարուածելով իր հարիւրաւոր ոխերիմ թշնամիներին, որոնք կատաղի բացականչութիւններով ընդհատում էին նրա ճառերը, սպառնալով պատառ - պատառ անել նրան ու դուրս չպրտել պարլամենտի լուսամուտներից: «Ո՞վ ես դու, անդուսպ վայրենի իրլանդացի», — հարցնում էին նրանից: «Ես, — պատասխանում էր նա, — ես իրլանդական ազգի առաջնորդն եմ, այն հալածված, արհամարհված, սովատանջ ազգի, որը վաղ - ուշ պէտք է խորտակի իրան կաշկանդող շղթաները, պէտք է շարտի իր ուսերից ստրկութեան դաժան լուծը, պէտք է վերջ տայ ձեր անգթութիւններին, ձեր բռնակալութեան ու անդուսպ կամայականութեան: Ես, Իրլանդիայի հաւատարիմ զաւակը լինելով, պէտք է դուրս խլեմ ձեր ձեռքից նրա ազատութիւնը, նրա փառքը, նրա ապագայ երջանկութիւնը, և պէտք է ես կուեմ մինչև այն րոպէն, երբ դուք անձնատուր կըլինէք ինձ և ձեր զէնքերը կը խոնարհեցնէք իմ առաջ:» Այդ և զրա նման կրակոտ ճառերն անկարագրելի իրարանցում ու աղմուկ էին առաջ բերում պարլամենտում, ուստի նիստերը վերջանում էին կառավարութեան համար անհետ-

ւանք: Գլադստոնն ստիպված եղաւ վեց անգամ հարց բարձրացնել պարլամենտում Ֆորստէրի օրէնագծի անյետաձգելի լինելու մասին, բայց անյաջող: Իրլանդացիներն անհնարին էին դարձնում քննադատութիւնը: Վերջապէս պարլամենտը վճռեց ամենաժայռահեղ միջոցների դիմել օրէնագիծն անցկացնելու համար. իրլանդացիներից շատերին ոյժով հեռացրին դահլիճից, բայց երբ այդ էլ չօգնեց, այն ժամանակ արտաքսեցին ամբողջ իրլանդական կուսակցութիւնը Պարնէլլի հետ միասին: Անօրինակ տեսարանների հանդիսարան էր պարլամենտն այդ հռչակաւոր նիստերի ժամանակ. իրլանդացիները ուշ չէին դարձնում սպիկերին, որը հրաւիրում էր նրանց թողնել դահլիճը, այն ժամանակ նրանց բռնի ոյժով վեր էին քաշում նստարաններից. սկսվում էր կատարեալ ըմբիշների կռիւ. փոքրաթիւ իրլանդացիները պատռոտված հագուստներով դուրս էին նետվում դահլիճից, երբեմն լուսամուտներով: Բայց Պարնէլլն իր հաւատարիմ իրլանդացիներով շրջապատված կրկին մուտք էր գործում դահլիճը, որտեղ սկսվում էր իսկոյն փոթորկալի կռիւը: Այդ տեսարաններին վերջ դրին նրանով, որ պարլամենտի դռները ժամանակաւորապէս փակեցին իրլանդացիների առաջին: Գործավարութեան այդ բռնի ձեւը միջոց տուեց կառավարութեան իր նպատակներին հասնել. 1881 թ. փետրվարի վերջին Ֆորստէրի օրէնագիծը վերջնականապէս ընդունվեց ու օրէնքի ոյժ ստացաւ: Բայց այդ դեռ բաւական չէր թշուառ Իրլանդիայի համար. նոյն թւի մարտին կառավարութիւնը առաջարկեց պարլամենտին մի ուրիշ օրէնագիծ նոյն բնուորութեամբ,

որն ընդունվեց նոյնպէս ու անմիջապէս սկսվեց գործադրվել Իրլանդիայում:

***.

Խիստ միջոցների գործադրութիւնը փոխանակ սանձահարելու Իրլանդիան, աւելի ևս լայնացրեց այնտեղ անբաւականութեան հոսանքն ու խիստ ատելութիւն առաջ բերեց դէպի Գլադստօնի կառավարութիւնը, որը բաղադրապէս շուտով հասկանալով, թէ ինչ ծայրահեղութեան մէջ է ընկել, վճռեց փոքր ինչ թեթեւացնել Իրլանդիայի գլխին իջնող հարուածների ծանրութիւնը և այդ նպատակով 1881 թ. ապրիլին պարլամենտի քննադատութեան առաջարկեց Իրլանդիային վերաբերեալ հողային մի նոր օրէնագիծ, որի գլխաւոր նպատակն էր երկրագործների նիւթական ապահովացումն հողատէրերի համար պարտադիր, օրէնքով որոշված, հողավարձի միջոցով: Բացի այդ նոր օրէնագիծը եռանդուն միջոցներ էր տալիս վարչութեան ձեռքը աղքատ երկրագործներին հողեց արտաքսելու առաջն առնելու համար: Գլադստօնի այդ նոր օրէնագիծը մեծ ընդիմադրութեան հանդիպեց պահպանողականների կողմից, որոնք սկսան Գլադստօնին բացարձակ մեղադրել կոմունիզմի մէջ, ասելով, որ նա այդպիսով կողոպտել է ուղղում իրլանդացի հողատէրերին: Օրէնագիծին ընդիմադրում էր նմանապէս իրլանդական կուսակցութիւնը, որը, սկզբունքով հաւանութիւն տալով նրան, աշխատում էր կցել նրան մի քանի կարեւոր յաւելուածներ յօդուտ իրլանդացի երկրագործների.

այդ նրանց մասամբ յաջողվեց: Չընայած լորդերի պալատի բուռն ընդիմադրութեան, 1881 թ. օգոստոսի 22-ին Գլադստօնի հողային օրէնագիծն օրէնքի յոյժ ստացաւ. վերջին լուսնում լորդերը, տեսնելով Գլադստօնի հաստատամտութիւնը, յետ նահանջեցին նրա առաջ: Պարնէլը բոլորովին չըյափշտակվեց Գլադստօնի կառավարութեան այդ խելացի ու արդար քայլով դէպի Իրլանդիան. նա հասկացաւ ու յայտնեց բացարձակապէս, որ իրլանդական կուսակցութեան տարած այդ յաղթութիւնը պէտք է բնականաբար նոր յոյժ տայ նրա կուսին ու տանի նրան դէպի նոր, աւելի փառաւոր ու աւելի արդիւնաւէտ յաղթութիւններ: 1881 թ. սեպտեմբերին Գուրլինում արտասանած իր ճառերից մինում նա ասաց ի միջի այլոց. «Չըպէտք է մոռանալ մեր զինաւոր նպատակը, որն է՝ հողը հողատէրերից պէտք է լիովին անցնի երկրագործների ձեռքը. այժմեան հողազուրկ գիւղական բանւորն ինքը պէտք է լինի տէր այն դաշտի, որի վրա նա արիւն քրտինք է թափում:»

Պարնէլը այդ վերաբերումը դէպի Գլադստօնի հողային վերանորոգութիւնը մեծ անբաւականութիւն պատճառեց վերջինին, որը մի յարմար առիթի էր սպասում իր զայրոյթը հրապարակով յայտնելու Պարնէլը դէմ: 1881 թ. հոկտեմբերի 7-ին Լիդս քաղաքում կայացած մի ժողովում նա արտասանեց մի ճառ, որի մէջ արհամարհանքով էր խօսում «պարլամենտում գոյութիւն ունեցող մարդկանց մի խումբակի մասին, որին չի կարելի մինչև անգամ կուսակցութիւն անուանել, քանի որ նա բարոյական արժանաւորութիւն չունի կուսակցութիւն կոչվելու

իրաւունքից օգտւելու:» Այդ «խմբակի» առաջնորդին, «Կօրկի պատգամաւորին» *), զայրացած Գլադստօնը ուղղակի մեղադրում էր այն բանում, որ նա աշխատում է ամեն կերպ՝ խանդարել օգտուէտ օրէնքների կանոնաւոր դործադրութիւնը և պատրաստ է քարոզել նոր վարչապետութիւն, որը կարելի է անուանել «կողոպտման աւետարան»: Իր ճառի վերջում Գլադստօնը յոյս յայտնեց, որ իրլանդական ժողովրդի առողջ դատողութիւնը, «չընայած Պարնէլլի բռնակալութեան», կրթելադրի նրան խելացի կերպով օգտւել հողային օրէնքով: Բացի այդ Գլադստօնն այդ ճառում մի քանի սպառնալիքներ ուղղեց Պարնէլլի հասցեին, սպառնալով նրան խիստ պատասխանատւութեան ենթարկել, եթէ նա շարունակի նոր դժուարութիւններ առաջ բերել Իրլանդիայում:

Այդ ճառի մէջ Պարնէլլը տեսաւ, որ առաջին նախարարը միջնադարեան ասպետների պէս նրա առաջը ձեռնոց է ձգել, մի տեսակ մենամարտութեան հրաւիրելով նրան. նա անվեհերութեամբ ընդունեց հրաւերը, մի րոպէ անգամ չըմտածելով յետ նահանջելու մասին: Հոկտեմբերի 9-ին Իրլանդիայի Վեկսթորդ քաղաքում մի բազմամարդ ժողով կայացաւ, ուր հանդիսականներն աննկարագրելի ոգևորված ցոյցերով հանդիպեցին Պարնէլլին, բուռն կերպով բողոքելով այն մեղադրանքի դէմ, որը Գլադստօնը բարձել էր «Իրլանդիայի անթագակիր թագաւորի» վրա: Պարնէլլն իսկոյն ամբիօն բարձրացաւ

*) Պարնէլլը հարաւային Իրլանդիայում գտնվող Կօրկ քաղաքի ներկայացուցիչն էր պարլամենտում:

ճառ արտասանելու, որի մէջ, խիստ քննադատութեան ենթարկելով Գլադստօնի վերջին ճառը, ասաց մօտաւորապէս հետևեալը. «Կառավարութիւնն ամեն կերպ աշխատում է Իրլանդիայում կարգ պահպանել, բայց նա ոչ մի բարոյական ոյժ չունի այդ անելու: Ո՛չ — բացականչեց նա, — անդլիացիները զուրկ են այդպիսի ոյժից Իրլանդիայում իրլանդական ժողովուրդը, մեծից սկսած մինչև փոքրը, դէմ է նրանց գերիշխանութեան: Կառավարութեան սպառնալիքներն, ի հարկէ, շատ համարձակ են, բայց ինձ թւում է, թէ նրանք սաստիկ նման են այն շվիդցիին, որով դպրոցի փոքրիկ աշակերտը, անցնելով գիշերվայ ժամին գերեզմանատնով, աշխատում է խրախուսել իրան:» Հետևալ որը հասարակական ճաշի ժամանակ Պարնէլլը մի մարգարէութիւն արաւ իր հայրենիքի ապագայի մասին. նա ասաց. «Յաճախ ինձ պատահում է մտածել, որ Իրլանդիան բոլորովին դեռ չէ անցել թշուառութիւնների այն վիթխարի հօսանքի միջով, որով նա պէտք է անցնի, նախ քան աւետեաց երկրի փրկարար կեանքին հասնելը: Հաւանական է, որ մենք դեռ շատ տառապանքներ պէտք է կրենք, հաւանական է, որ մեզ նոր նեղութիւններ ու զրկանքներ են սպասում, աւելի անողորմ, աւելի անկանքներ են նրանք մինչև այժմ:» Այդ մարգարէութիւնը մասամբ կատարվեց: Հոկտեմբերի 12-ին Լօնդօնում կայացաւ մինիստրների խորհուրդ, և նոյն օրուայ երեկոյեան Փօրստէրն իր հետ Իրլանդիա տարաւ Պարնէլլին բանտարկելու հրամանը: 1881 թ. հոկտեմբերի 13-ին «Իրլանդիայի անթագակիր թագաւորը» վաղ առաւօտեան ձերբակալվեց

ու բանտարկվեց Դուբլինի Կիլմինգամ բերդում: Պարնելլի բանտարկման լուրը մեծ իրադանցում առաջ բերեց Իրլանդիայում: Զայրացած ամբոխը սպառնում էր մինչև անգամ հիմնայատակ անել Կիլմինգամը, ուր կաշկանդված էր նրա կուռքը, նրա քաջարի զրօշակակիրը: Ժողովրդի կատաղի բողոքներն առիթ տուան կառավարութեան նոր լիազօրութիւններ տալ Ֆորստերին, որը բանտ նստացրեց իրլանդական միւս նշանաւոր գործիչներին, — Դիլլօնին, Սեկստօնին, Օ'Բրիենին ու Օ'Կելլին: Ի պատասխան այդ բռնութիւններին Իրլանդիայի «Հողային Միութիւն» ընկերութիւնը հրատարակեց հռչակաւոր «No rent» հրովարտակը, որով ազգաբնակչութիւնը հրաւիրվում էր հողավարձ չըվճարել լէնդ-լորդներին: Կառավարութիւնն օգտուեց այդ դէպքից ու խափանեց «Հողային Միութեան» գործունէութիւնը, յայտարարելով նրան ապօրինի ընկերութիւն: Քիչ-քիչ խիստ միջոցների գործադրութիւնն Իրլանդիայում հասաւ կատարեալ ծայրահեղութեան: 1882 թ. առաջին քառորդում Իրլանդիայի բանտերում գտնվում էին մօտ 600 հոգի. այդ թւում էր պարլամենտական կուսակցութեան մեծամասնութիւնը: «Հողային Միութեան» խափանումն ու կառավարութեան միւս խստութիւնները առաջ բերան Իրլանդիայում գաղտնի ընկերութիւնների մի ահազին ցանց: Ամեն քայլափոխում նկատվում էին արիւնահեղ յեղափոխութեան նշաններ, իսկ կառավարութիւնը սրան-նրան բանտ նետելով, աւելի ևս հնարաւոր ու հաւանական էր դարձնում յեղափոխութիւնը: Ֆէնիկներն այստեղ-այնտեղ գլուխ էին բարձրացնում: Նրանց անունն անգամ սարսափեցնում էր խաղաղասէր մարդկանց:



Ազատամիտ կուսակցութեան շրջանում քիչ-քիչ սկսվեց տարածվել այն համոզմունքը, որ ձեռք առած բռնի միջոցներն իրլանդական շարժման դէմ անօգուտ են ու կորստաբեր. նրանք աւելի ոյժ են տալիս շարժման ու աւելի հնարաւոր դարձնում նրա յաղթանակը: Դլադստօնն առաջինն էր այն ազատամիտներից, որոնք եկան այդ համոզմունքին. նա հասկացրեց իր կողմնակիցներին, որ մտադիր է թողնել այն քաղաքականութիւնը, որի պահպանութեան ու զարգացման համար այնքան ձիգ էր թափում Ֆորստերը: Դլադստօնն իրեն յատուկ քաղաքացիական արիութեամբ ու քաջութեամբ հաշտութեան ձեռք մեկնեց իր իրլանդացի հակառակորդներին:

1882 թ. մարտին կառավարութիւնը դիմեց Կիլմինգամի բանտարկեալներին ու յայտնեց նրանց, որ կարող են նրանք ազատութիւն ստանալ այն պայմանով միայն, որ ժամանակաւորապէս թողնեն երկիրն ու հեռանան արտասահման, որտեղից բոլորովին ազատ կարող են վերադառնալ հայրենիք, երբ որ այդ նրանց ցանկալի կըլինի: Պարնելլն ու նրա ընկերները, չնայած, որ կառավարութիւնը մի քանի անգամ դիմեց նրանց այդ առաջարկութեամբ, հրաժարվեցին բոլորովին բանակցել կառավարութեան հետ, որը նրանց բռնի կերպով բանտ էր նետել: Կառավարութիւնն ստիպված եղաւ նախ քան Պարնելլին ազատելն ընդունել նրա մի քանի առաջարկութիւններն ապագայ գործունէութեան վերաբեր-

մամբ: Գլադստոնի լեազօրներն ունեցան Պարնէլլի հետ Կիլմինգամի բերդում երէար ու ձիգ բանակցութիւններ, որոնք վերջացան երկու կողմերի մէջ կապած առանձին պայմանագրով, որը յայտնի է «Կիլմինգամի դաշնագիր»: Այդ դաշնագրով Գլադստոնը պարտաւորվում էր վերջ դնել Իրլանդիայում տիրապետող բռնի քաղաքականութեան, կառավարութեան հալածանքներին, իսկ Պարնէլլը յանձն էր առնում գործ դնել իր ազդեցութիւնը Իրլանդիայում ներքին խաղաղութիւնը վերականգնեցնելու համար: «Կիլմինգամի դաշնագիրը» կնքելուց յետոյ միայն, Պարնէլլն իր ընկերներով դուրս եկաւ բանտից, յաղթական գնացքով անցաւ Իրլանդիայով ու փառաւոր մուտք գործեց անգլիական պարլամենտը, ուր կրկին զրաւեց իր տեղն ու իր զերը: Կառավարութեան նոր քաղաքականութեան բարերար հետեանքներն երկար իրանց սպասել չէին տալ, եթէ այդ միջոցում չըպատահէր մի անսպասելի դրամա: Անյայտ չարագործները Դուբլինի Ֆէնիկս-պարկ այգում սպանեցին Իրլանդիայի նոր կառավարիչ Ֆորստերի յաջորդ Կաւէնդիշին ու նրա աշխատակից Բօրկին: Այդ հղեռնագործութիւնը պատահեց 1882 թ. մայիսի 4-ին, Պարնէլլի ազատութիւնից երկու օր անցած: Ընդհանուր զայրոյթը մեծ էր. ևս առաւել զրգռված էր Պարնէլլը, որը մի հրովարտակով, ուղղած Իրլանդիայի ժողովուրդին, իր խորին վիշտն էր յայտնում ցաւալի դէպքի առիթով: Մայիսի 8-ին պարլամենտում նա խօսք խնդրեց ու իր ճառի մէջ, անողորմ դատապարտելով չարագործներին, զայրացած նկատեց, որ նրանք, եղեռնագործները, ոչ մի

կապ չունեն իրլանդական սուրբ գործի հետ: Պարնէլլի անկեղծութեան հաւատաց ամբողջ Անգլիան. ոչ ոք չէր մտածում նրան կամ նրա կուսակցութիւնը մեղադրել այդ չարագործութեան մէջ: Չընայած դրան, կառավարութիւնը, հասարակաց կարծիքին զեջանելով, ստիպված եղաւ պարլամենտի հայեցողութեան առաջարկել մի նոր յատուկ խիստ օրէնագիծ Իրլանդիային վերաբերեալ: Չընայած Պարնէլլի բուռն ընդիմադրութեան, օրէնագիծն ընդունվեց ու օրէնքի յոյժ ստացաւ, բայց կառավարութիւնը նրան այն չափերով չըգործադրեց Իրլանդիայում, ինչպէս սպասվում էր. Գլադստոնի մարդասէր քաղաքականութիւնն արդէն ուղիղ ճանապարհ էր հարթել իր համար:

XXX.

Գլադստոնի երկրորդ կառավարութեան վերջին տարիներում (1883 — 1884 թ.) ազատամիտ կուսակցութիւնը, հետեւելով իր մեծ ղեկավարին, վերջնականապէս եկաւ այն համոզմունքին, որ Իրլանդիայի ինքնավարութեան հարցը, հիմնուելով, պէտք է իր քաղաքական ծրագրի հիմնական կէտը դարձնել ու նրա իրագործումը մօտիկ ապագայի հերթական ամենակարեւոր խնդիրների շարքում դնել: Դրանով Իրլանդիան ամենից առաջ պարտական էր Պարնէլլին, նրա հանձարին, նրա սարսափելի եռանդին, նրա զարմանալի գործունէութեան: Վիթթարին, իր ասպարէզ դուրս գալու օրից սկսած անողորմ կռիւ մղելով պարլամենտի դէմ, կարողացաւ խորտակել

նրա յոժը, ոչնչացնել նրա յամառութիւնն ու իր լանդիայի դատը դնել Անգլիայի առաջ, իբրեւ մի անյետաձգելի, մի հերթական խնդիր: Դրա մէջ է կայանում Պարնէլլի յաղթանակը, որն իրաւունք է տալիս նրան փառաւոր տեղ բռնել պատմութեան էջերում:

1886 թ. Պարնէլլը հասաւ մասամբ իր մեծ նպատակին, որը թէև վերջնականապէս չերազործվեց, բայց այնուամենայնիւ Իրլանդիայի դատը մի այնպիսի նոր ընթացք ստացաւ, որին Օ'Կոնէլլից սկսած ձգտում էին իրլանդացի բոլոր հայրենասէրները: Այդ թւին անգլիական կառավարութիւնն ինքը ձեռք առաւ հոմրուլի պաշտպանութիւնը, որի իրազործումն շինեց իր, ազատամիտ կառավարութեան, լինել թէ չլինելու հարց: Սահմանադրական երկիրներում առաջնակարգ հարցերի իրազործումն իւրաքանչիւր կառավարութիւն կապում է իր գոյութեան հետ և շնորհիւ միայն այդ ընթացքի կարողանում է հասնել իր վերջնական նպատակին: 1886 թ. Գլադստոնի կառավարութիւնը հէնց այդպէս էլ վարվեց իրլանդական հարցի հետ: Այդ էր Պարնէլլի ու նրա ընկերների ամենամօտ նպատակը: 1886 թ. մարտին Գլադստոնն առաջին անգամ համայնքների ժողովին առաջարկեց իր հռչակաւոր հոմրուլ բիլլը*) (Home-rulle), որով կառավարութիւնը պահանջում էր Բրիտանիայի պարլամենտից շնորհել Իրլանդիային սեփական պարլամենտ:

Գլադստոնի օրէնագիծն ահագին փոթորիկ առաջ բերեց նրա հակառակորդների շարքերում: Գլադստոնն

ու Պարնէլլն իրանց անվերջ կրահատ ճառերով ամբողջ ժամերով հեղեղում էին պալատը, որը թրնդում, տատանվում, դողդում էր փոթորիկի ծովի նման, բայց պահպանողականները մնում էին խուլ դէպի իրանց անողորմ հարուածողների արդարացի պահանջները: Տօրիները*) ասպարէզ դուրս բերան իրանց ամենալաւ յոժերը, որոնց յաջողվեց համոզել տատանվողներին, որ Գլադստոնի օրէնագիծը խախտում է Մեծ Բրիտանիայի, Միացեալ Թագաւորութեան ամբողջութիւնը, հետեւապէս և վտանգի է ենթարկում նրա հզօրութիւնը, անտեսական յոժը, փառքը,—մի խօսքով այն բոլորը, ինչ որ ձեռք է բերել Անգլիան տարիների ու դարերի ընթացքում: Այդ հակաճառութիւնների հետեւանքն այն եղաւ, որ Գլադստոնից յետ նահանջեցին մօտ 60 — 70 հօգի ազատամիտ կուսակցութեան անդամներ, որոնք լորդ Դարինգտոնի, վերջերումս դուքս Դէվօնշիրի և Չէմբերլենի առաջնորդութեամբ սկսեցին մաքառել հոմրուլի դէմ: Հետեւանքն այն եղաւ, որ համայնքների պալատը 343 ձայնով ընդէմ 313 մերժեց Գլադստոնի հռչակաւոր օրէնագիծը: Վերջինս իսկոյն արձակեց համայնքների ժողովն ու զիմեց ժողովրդին նրա կարծիքն իմանալու ընդհանուր ընտրութիւնների միջոցով: Բուռն ընտրողական պայքարը, երկու հակառակ բանակների կատաղի կռիւր վերջացաւ հակահոմրուլականների, պահպանողական կուսակցութեան, կատարեալ յաղթութեամբ: Գլադստոնն ստիպված եղաւ թողնել կառավարութեան ղեկը, որն անցաւ

*) Օրէնագիծ:

*) Պահպանողականները:

Դիրքայելի - Բիկոնսփիլդի յաջորդ մարկիզ Սալիսբի-
րի ձեռքը:

Ազատամիտ կուսակցութիւնը, իր մեծ առաջնորդի
Հեա միասին թողնելով կառավարչական ասպարէզը,
յետ չի նահանջեց հոմբուլից, այլ աւելի սրտով
կպաւ նրան: Մեծ ծերունի Գլադստօնը անգլիական
հոմբուլականների գլխաւոր դրօշակակիրը դարձաւ.
նրանք այլ կերպ սկսեցին կոչվել Գլադստօնեաններ:
1886 թ. ընդհանուր ընտրութիւններն իսկապէս
թոյլ մեծամասնութիւն տուին պահպանողական կու-
սակցութեան: Հոմբուլականներն իրանց բոլոր ոյժերը
լարեցին պահպանողական աննշան մեծամասնութիւ-
նը ոչնչացնելու. այդպիսով նրանք յոյս ունէին շու-
տով տապալել Սալիսբիւրի կառավարութիւնը ու
գործերի ղեկը կրկին տալ Գլադստօնի ձեռքը:



1886 — 1887 թւականներն Իրլանդիայի համար
որ և է նշանաւոր հետեանքներ չունեցան. պահպա-
նողական կառավարութեան ուշադրութիւնն աւելի
գրաւում էր արտաքին քաղաքականութիւնը, որի
գլխաւոր ղեկավարն էր ինքը լորդ Սալիսբիւրին: Ներ-
քին գործերի շրջանում ոչ մի առաջնակարգ բարե-
փոխութիւն չեղաւ: Գլադստօնն իր ժամանակը անց
էր կացնում հաւարդէնում, որտեղ անձնատուր էր
լինում գրական գործունէութեան: Երբեմն միայն նա
երևում էր պարլամենտում ու զանազան միախնդնե-
րում: Իր գործունէութիւնը նա սահմանափակում
էր կառավարութեան քաղաքականութեան ուսում:

նախընտրութեամբ ու իրլանդական պրօպագանդայով:
Պարնէլլն այդ ժամանակ թէև նախկին եռանդով
մասնակցում էր պարլամենտի նիստերին, բայց հնա-
րաւորութիւն չունենալով տապալել Սալիսբիւրիի
կառավարութիւնը կամ ստիպել նրան՝ որ և է վճի-
ռական քայլ անել յօգուտ Իրլանդիայի, նա աւելի
ուշադրութիւն էր դարձնում հասարակական ժողով-
ների, միախնդների վրա, որոնց միջոցով միայն կա-
րելի էր նպատաւոր հող պատրաստել ապագայ
ընդհանուր ընտրութիւնների համար: Պարնէլլն իր
ընկերներից երբեմն ուղարկում էր չիւսիսային Ամե-
րիկա, որտեղ նրանք այնտեղ բնակվող իրլանդացի-
ների շրջանում քարոզում էին ազգային անկախու-
թեան գաղափարը և հրաւիրում էին նրանց մաս-
նակից լինել ընդհանուր շարժման, հայրենիքի ազա-
տութեան սուրբ գործին: Այդ պրօպագանդայի հետե-
ւանքը լինում էր առատ նիւթական զոհաբերութիւն,
որը մշտական ու անսպառ աղբիւր էր ծառայում
«Իրլանդական ֆօնդի» համար: Վերջինիս միջոցները
Պարնէլլի ժամանակ հասնում էին մի քանի միլիօն-
ների: «Իրլանդական ֆօնդը» երկու նպատակ ունէր.
օգնութիւն հասցնել հողադուրի, սնանկացած, սովա-
տանջ ու երկրից արտաքսվող երկրագործներին և
ծառայել ազգային գործի առաջադիմութեան: Ամե-
նապէս իրլանդացին, աշխարհիս որ ծոցում էլ
նա գտնվէր, չէր խնայում իր լուծման այդ ընդհա-
նրական գանձանակից:

Վրա հասաւ 1888 թ. պարլամենտական նստա-
շրջանը: Գահական ճառի մէջ որ և է նշանաւոր
բարենորոգութեան մասին դարձեալ ոչ մի խօսք չըկար:

Հոմբուլի պաշտպանը.

Այդ առիթ տուեց Հոմրուլականներին արշաւանք սկսել Սալիսբուրիի կառավարութեան դէմ: Նրանց հետ միասին գլուխ բարձրացրին բանւորները, որոնք սկսեցին պահանջել տնտեսական վերանորոգութիւններ: Լօրդ Սալիսբուրիի կառավարութիւնը չը տատանվեց վերագրել այդ նոր շարժումն իրլանդացիների փախչանքներին: Իր գործունէութիւնը նա սկսեց նրանով, որ Իրլանդիայի համար մի քանի նոր խիստ օրէնադէր առաջարկեց պարլամենտին: Համայնքների, ևս առաւել լօրդերի ժողովը մեծ հաճութեամբ ընդունեցին այդ օրէնադէրը, որոնք հնարաւորութիւն տուին Իրլանդիայի կառավարիչ Բալֆուրին սկսել հալածանքների մի երկար շարք բազմաթիւ «Կանաչ կղզում»: Պարնէլլն ու Գլադստօնը կառավարութիւնից լաւ բան չէին սպասում, բայց այդ անպէտք ու կորստաբեր ընթացքն այնուամենայնիւ մեծ զարմանք պատճառեց նրանց և նոր դէնք տուեց նրանց ձեռքը: Հոմրուլական կուսակցութիւնը բացարձակ կոիւ յայտարարեց պահպանողականներին, և նրա ջանքերն անհետեանք չըմնացին: 1888 թ. մի շարք մասնաւոր ընտրութիւններ վերջացան յօգուտ հոմրուլականների. պահպանողականներն սկսեցին այս ու այն շրջանում պարտութիւն կրել: Այդ երեջթը պարզ ապացոյց էր, որ հասարակական կարծիքը թեքվում էր «Մեծ Ծերունու» կողմը ու չէր համակրում կառավարութեան բռնած ընթացքը: Վերջինս սակայն չէր փոխում այդ ընթացքն և ծուռ ու մուռ միջոցներ էր փնտռում ոչնչացնել իր դԷԼ խաւոր հակառակորդներին, որոնցից նրա համար ամենավտանգաւորն էր Պարնէլլը, ուստի պահպանո-

ղականները դիմեցին ամենաքստմեկին միջոցների «Իրլանդիայի անթաղակիր թաղաւորին» քաղաքականապէս ոչնչացնելու համար: Այդ զղուելի պաշտօնը յանձն առաւ յայտնի «Times» լրագիրը, որը 1888 թ. կիսից մի մեծ արշաւանք սկսեց Պարնէլլի դէմ, իր անվերջ յօդուածների ճակատին դրօշմելով «Պարնէլլիզմ ու յանցանք» վերնագիրը: Իր այդ յօդուածի մէջ տօրիների օրգանը առանց քաշվելու Պարնէլլին մեղադրում էր մի շարք քաղաքական ու քրէական յանցանքների մէջ. մարդասպանութիւն, դաւադրութիւն, ֆէնիական ձգտումներ, — ամեն բան բարձում էր նրա գլխին: Նշանաւոր լրագրի այդ անզուսպ յօդուածները չէին կարող իրանց վրա չըզրաւել հասարակութեան ու պարլամենտի ուշադրութիւնը: Կառավարութիւնը կողմնակի կերպով նպաստում էր այդ քստմեկի ազիտացիային ու սպասում էր յարմար առիթի Պարնէլլին բանտարկելու ու դատի ենթարկելու համար: Երբ «Times» լրագրի յանդիմութիւնը հասաւ այն աստիճանի, որ նա յայտարարեց, թէ իր ձեռքում ունի պերճախօս դօկումենտներ, որոնց օգնութեամբ նա կարող է դատարանում հաստատել իր բոլոր մեղադրանքները, այն ժամանակ Պարնէլլն ինքը պահանջեց, որ իր դօրծն առաջարկեն դատարանի քննութեան: 1889 թ. սկզբին լօրդերի պալատի անդամներից պետական յանցանքների վերաբերեալ օրէնքների զօրութեամբ կազմակերպվեց բարձրագոյն դատաստանական ատեան, որին յանձնվեց Պարնէլլի դօրծի քննութիւնը:

Պահպանողականներից շատերն իրանց ուրախութիւնը չէին ծածկում, կարծելով, թէ հասել են

իրանց փայփայած նպատակին: Գործի հէնց սկզբում նրանք յաճախ կրկնում էին՝ «Իրլանդիայի անթագակիր թագաւորն արագ քայլերով գնում է դէպի Վատերլոօ», բայց նրանք չարաչար սխալվեցին իրանց գուշակութիւնների մէջ: Պարնէլլին հռչակաւոր գործը շարունակվեց մի քանի ամիս: «Times»-ը լարեց իր բոլորը յոգերը: Պարնէլլին իր գործի պաշտպանութիւնը յանձնեց յայտնի Բոսսէլ փաստաբանին, որը հեշտութեամբ պարզեց նրա ստոր թշնամիների իսկական նպատակներն ու նրանց գործը դրած զգվելի միջոցները: Գործի մանրակրկիտ քննութիւնը ցոյց տուեց, որ «Times»-ի ներկայացրած զօկումենտները բոլորն էլ կեղծ են, կաշառքների ու ինտրիգաների արդիւնք են, որ նրանց հեղինակն է մի ոմն Պիգօտտ, մի անյայտ աֆերիստ: Այդ բոլորի պերձախօս ապացոյցն եղաւ Պիգօտտի փախուստն Իսպանիա, նրա այնտեղ գործած անձնասպանութիւնը ու նրա թողած մի երկտող նամակը, որի մէջ նա խոստովանում էր իր յանցանքը: Այդ անօրինակ դէպքի հետեանքը եղաւ Պարնէլլին փառաւոր արգարացումն, որը պաշտօնապէս յայտարարվեց 1889 թ. վերջերում և որն ահադին իրարանցում առաջ բերեց թէ Անգլիայում և թէ Իրլանդիայում: Պաշտպանողականներն ու նրանց կառավարութիւնը բարոյական մեծ պարտութիւն կրեցին: Պատահեց մի անօրինակ դէպք. պաշտպանողական կառավարութիւնը անբուժելի վէրք ստացաւ իր սեփական բանակից. 1890 թ. նստաշրջանի սկզբում պաշտպանողականների յայտնի պարագլուխներին մինը, լորդ Բանդօլֆ Զօրչիլը, համայնքների ժողովում մի փոթորկալից ճառ արտասանեց Սալիսբուրի-

րիի կառավարութեան դէմ, որի մէջ իր բուն համակրութիւնը յայտնելով Պարնէլլին, անխնայ դատափետեց այն ստոր դերը, որը խաղում էր կառավարութիւնը Պարնէլլի գործում և որն առհասարակ անպատեաբեր էր Մեծ Բրիտանիայի ղեկավարների համար: Իր հռչակաւոր ճառը Զօրչիլը վերջացրեց հետեւեալ խօսքերով. «Վիթխարի լիւր մոռնի ծնեց, և իմ ձեռքում էիք դուք խաղալիք, — Պիգօտտի, Պիգօտտի, Պիգօտտի, մի անյայտ ու ողորմելի թղուկի:» Հռետորի վերջին խօսքերը ծափահարութիւնների փոթորիկ առաջ բերան հոմբուլականների շարքերում: Պաշտպանողականները բոլոր ժամանակ գունամափ ու սարսափահար լսում էին իրանց պարագլուխին. նրանց շարքերում գերեզմանային լութիւնը չնդհատվեց մինչև ճառի վերջը:

Զօրչիլի ճառն աւելի ևս մեծ զարկ տուեց հակապաշտպանողական շարժման, որը երկրի բոլորը ծայրերում նկատվում էր սկսած 1888 թ.: Գլադստօնն սկսեց մեծ եռանդով գործել: «Մեծ Ծերունու» իւրաքանչիւր նոր քայլը սարսափ էր տածում կառավարութեան վրա, որը նրա յաջողութեան մէջ տեսնում էր իր մօտակայ անկումը: 1890 թ. ամառը հաւարդէնում տեսակցութիւն կայացաւ Գլադստօնի ու Պարնէլլի մէջ: Այդ տեսակցութեան ժամանակ Գլադստօնը ներկայացրեց Պարնէլլին հոմբուլի նախագիծը և ծանօթացրեց նրան այն նոր սկզբունքների հետ, որոնք հիմք պէտք է ծառայէին հռչակաւոր օրէնադէին: Պարնէլլն ընդունեց նախագիծն ու հաւանութիւն տուեց Գլադստօնի հայեացքներին: Դորա հետեանքն եղաւ այն համաձայնութիւնը, որը կայացաւ նրանց

մէջ ընդհանուր ընտրութիւնների ժամանակ գործելու եղանակների մասին, քանի որ համընկնողները յոյս ունէին այդ ընտրութիւնները շուտով հնարաւոր դարձնել:



1890 թ. ամառը պահպանողականների բանակից սկսեցին մի քանի կասկածելի լուրեր տարածվել Պարնէլի մասին: Այդ լուրերը շուտով կատարեալ արշաւանքի փոխվեցին, ուղղված ոչ թէ Պարնէլի, իբրեւ քաղաքական գործչի, այլ Պարնէլի, իբրեւ մասնաւոր մարդու դէմ: Գտնվեց իրլանդացի մի օմն Օ'Շի, որն իր գործակալների միջոցով սկսեց տարածել լուրեր, իբր թէ Պարնէլը խաբէութեամբ գայթակղել է նրա կնոջ, ոչնչացրել է նրա ընտանեկան կեանքը, թէ նա, Պարնէլը, մի անբարոյական ու պիղծ մարդ է, որի համար ոչ մի սրբութիւն զոյւթիւն չունի: Պահպանողական կեղծաւորներն սկսեցին առանց քաշվելու ցեխ շարտել Պարնէլի վրա, պահանջել, որ նա հեռանայ քաղաքական ասպարէզից, իբրեւ բարոյականութեան դէմ մեղանշող մի անարժան մարդ: Ազատամիտ թերթերն այդ գործին այնքան էլ լուրջ նշանակութիւն չէին տալիս. նրանք սպասում էին, թէ ինչպէս կըլուսաբանի նրան դատարանը: 1890 թ. Օ'Շին դիմեց դատարան, ապահարզան պահանջելով իր կնոջից: Պարնէլն ու տիկին Օ'Շին ոչ ներկայացան դատարանին և ոչ պաշտպաններ ուղարկեցին: Դատարանում պարզվեց, որ Օ'Շի ամուսիններն արդէն մի քանի տարի է, ինչ իրարից բաժանված ապ-

րում են առանձին, որի տիկինը վաղուց ի վեր սիրում է «Իրլանդիայի անթաղակիր թագաւորին.» նա զիտակցաբար թողել է իր անարժան ամուսնուն, որին իր կնոջ հետ միայն դրամական հաշիւներն են կապելիս եղել, ու զնացել է իր սիրած տղամարդի, իր զիւցազնի յեակից: Դատարանը, հիմնվելով այդ փաստերի վրա, ապահարզան տուեց Օ'Շիի ամուսիններին ու այդպիսով պարզաբանեց գործը: Պարնէլի հակառակորդներն էլ հէնց այդ էին ցանկանում: Նրանց ուրախութեանը չափ ու սահման չըկաւ. սկսեցին դռուլ, կոչել, որ Պարնէլն, իբրեւ «անբարոյական» մարդ, անարժան է մի մեծ գործի, մի ամբողջ ժողովրդի ղեկավար լինել, ուստի նա պէտք է հեռանայ քաղաքական ասպարէզից: Իրլանդիայում Պարնէլի բարձրացրին կաթօլիկ փարիսեյիները, դէմ ձայն բարձրացրին կաթօլիկ փարիսեյիները, կեղծաւոր պատէրները, որոնք Պարնէլի վրա միշտ ծուռ աչքով էին նայում, որովհետեւ Պարնէլը բողոքական էր: Այդ միջոցին, 1890 թ. նոյեմբերին, բացվեց պարլամենտի աշխատային նստաշրջանը: Սկսած շարժումն արդէն վտանգաւոր կերպարանք էր ստացել. ազատամիտների շրջանում, մինչև անգամ իրլանդական կուսակցութեան մէջ, նշմարվում էր հակադական կուսակցութեան մէջ, նշմարվում էր հակապարնէլական հոսանք: Շատերն ասում էին, որ հասարակական կարծիքը մեղմացնելու համար նա պէտք է դնէ ժամանակաւորապէս հեռանայ գործերի ղեկավարութիւնից. բայց ոչ ոք վճռական քայլ չէր անում: սպասում էին, թէ ի՞նչ կ'սի Գլադստօնը: Վերջապէս նա յայտնեց իր կարծիքը. առանց Պարնէլի հետ տեսակցելու նա մի նամակով դիմեց նրա աշխատակից ծերունի Մակ-Կարտինին, որի մէջ խոս-

տովանելով իր անգորութիւնը՝ ընդդիմանալ զոյութիւն ստացած հոսանքին, խնդրում էր յայտնել «յարգելի ջէնտրմէնին» (Պարնէյլին), որ նա, չընայած իր ազգին մատուցած մեծ ծառայութիւններին, ֆնաւով ներկայ հանգամանքներում գործերի ղեկավար, կարող է ֆնասել իր փայփայած մեծ նպատակների իրագործման, ուստի պէտք է գոնէ ժամանակաւորապէս հեռանայ քաղաքական գործունէութեան ասպարէզից: Մակ-Կարտին Գլադստօնի նամակը կարգաց իրլանդական կուսակցութեան մասնաւոր ժողովում, որին նախագահում էր ինքը Պարնէյլը: Վերջինս, նախ և առաջ իր զժգոհութիւնը յայտնելով, որ Գլադստօնը նախ քան այդ վճռին դալն իր հետ չի խորհրդակցել, բացարձակ յայտնեց, որ մինչև վերջին շունչն իր ձեռքից չի թողնիլ իրլանդիայի դրօշակը, որի վրա գրած է՝ «Անողորմ կռիւ անգլիացիների դէմ»: Նա ասաց, որ դաշ կապելով Գլադստօնի հետ, երբէք նպատակ չի ունեցել ենթարկվել նրա պահանջներին, նա ղեկավար է ոչ թէ մի կուսակցութեան, այլ համայն իրլանդական ազգի, որը վաղ-ուշ պէտք է դուրս խլի իր ազատութիւնն անգլիացիների ձեռքերից, լինեն նրանք ազատամիտ, թէ պահպանողական. կռիւ մղողը պէտք է յաղթի ու ինքն առաջարկի թշնամուն հաշտութեան պայմանները, այլ ոչ թէ իր դրօշակը խոնարհեցնի նրա առաջ ու վիզը ծռած գլխութիւն խնդրի նրանից: «Եթէ ազատամիտները, — ասաց Պարնէյլը, — սպառնում են յետ նահանջել հոմբուլից, թող քաջութիւն ունենան անել այդ, այն ժամանակ մենք կըղիմենք այն տակտիկային, որի միջոցով Կիլմինգհամի բանաում նստած

զինաթափ արինք նրանց ու թելադրեցինք մեր պահանջները:» Պարնէյլի կրակոտ ճառը նրա ցանկացած հետեանքը չունեցաւ. նրան հաւատարիմ ֆնաց կուսակցութեան փոքրամասնութիւնը միայն, իսկ մեծամասնութիւնն ընդունեց Գլադստօնի առաջարկութիւնը ու, իրան առաջնորդ ընտրելով Մակ-Կարտին, միացաւ Գլադստօնի հետ, որը պաշտօնապէս խոստացաւ նրան հոմբուլն իր կուսակցութեան ծրագրից չըհանել ու շարունակել իրլանդական ազիտացիան: Այդ օրուանից իրլանդական կուսակցութիւնը բաժանվեց երկու մասերի — պարնէյլական ու հակապարնէյլական կուսակցութիւնների: Վերջինս միացաւ ազատամիտների հետ, իսկ առաջինը դրա մէջ կորստաբեր չափաւորութիւն տեսնելով, կռիւ սկսեց միացեալ գլադստօնեան ու հակապարնէյլական կուսակցութեան դէմ: Պարնէյլն անմիջապէս դիմեց Իրլանդիայի ժողովրդին մի հրովարտակով, որի մէջ նա իր ազգի ուշադրութիւնն էր դարձնում այն հանդամանքի վրա, որ իրլանդական պատգամաւորների Գլադստօնի առաջ խոնարհվելը մի կորստաբեր կօնպրօմիս է, որի հետեանքը պէտք է լինի իր, Պարնէյլի, հաւանութիւնը ստացած հոմբուլի նախագծի սւաղավումն ի ֆնաս Իրլանդիայի, որը պէտք է շարունակի իր երկարամեայ կռիւը, այլ ոչ թէ ֆնաց խոնարհութեան ու համեստութեան ճանապարհով, ինչպէս այդ անում են նրա հակառակորդ հակապարնէյլականները: Իր հռչակաւոր հրովարտակը Պարնէյլը վերջացնում է հետեւեալ խօսքերով. «Ես յուսով եմ, որ իրլանդական ժողովուրդն իր ազգային դատն ու հաւատարիմ առաջնորդներին չի շարտիլ բրիտանական դայլի

բերանը, որի սուր ժանիքներն այնքան բազմաթիւ վէրքեր են թողել նրա բազմաչարչար մարմնի վրա և այժմս էլ մի նոր զոհի են սպասում:»

Սյոյ հրովարտակը հրատարակելուց յետոյ Պարնէլլն անձամբ զնաց Իրլանդիա, ուր պարնէլլական ու հակապարնէլլական կուսակցութիւնների մէջ կատաղի կռիւ էր սկսված արդէն: Պարնէլլի դէմ զլխաւորապէս դործում էր ազդեցիկ կաթոլիկ հոգեւորականութիւնը: Հասարակ ժողովուրդը լսում էր նրան, իսկ երկտասարկութիւնը, հասարակութեան ինտելիգենտ ասարերը, որոնք աղատ էին հոգեւորականութեան ազդեցութիւնից, հաւատարիմ էին մնում Պարնէլլին ու ընթանում էին նրա ճանապարհով:

Սկսած 1890 թ. վերջերից մինչև 1891 թ. ամառը Պարնէլլն անընդհատ շրջում էր Իրլանդիայում, թափանցելով երկրի ամենախուլ անկիւններն անգամ: Ամեն տեղ նրան հանդիպում էին ողբորված ցոյցերով, անդուստ կնտուղիազմով. նա իրլանդացիների համար մարմնացած զաղափար էր: Շատ զիւղական շրջաններում նրան առաջին անգամն էին տեսնում: Մինչև այդ ժամանակ Պարնէլլը նրանց համար եղել է մի առասպելական հերոս. ժողովրդական բանաստեղծները, բարդերը, նկարագրելիս են եղել իրանց «անթագալիր կօնուզին» իբրև մի տիտանի, որը երկնքի բարձրութիւնից կայծակ ու կարկուտ է թափում միշտ անզլիացիների զլխներին, երբ նրանք իրանց չար զիտաւորութիւններն ուղղում են դէպի Իրլանդիան ու իրլանդացիները: Ժողովուրդն այժմս տեսնում էր իր զիւյազնին և չէր հաւատում իր աչքերին, թէ իր առաջին մահկանացու է կանգնած:

Հակապարնէլլականներն ամեն կերպ աշխատում էին գցել Պարնէլլի ժողովրդականութիւնը, եռանդուն աջակից ունենալով իրանց կաթոլիկ պատէրներին: Միջոցների մէջ նրանք բոլորովին խտրութիւն չէին գնում: Պարնէլլի կեանքի դէմ մի քանի փորձեր եղան, բայց անաջող. 1891 թ. յունվարին Կիլկէն քաղաքում չարագործներից մինը միտինգի ժամանակ մի կոյտ կիր նետեց նրա աչքերին, որից Պարնէլլը բարեբաղդաբար զգալի կերպով չըմբասվեց: Նոյն Կիլկէնում Պարնէլլի հետ պատահած զժբաղդ վէպքից մի քանի օր առաջ մի բազմամարդ միտինգում խօսում էին Պարնէլլն ու Դէվիտը, իրանց շուրջն ունենալով կողմնակիցների ահազին բազմութիւն: Միտինգը կազմված էր բաց երկնքի տակ քաղաքային հրապարակի վրա. հոետօրներին ամբիօն էին ծառայում հասարակ զիւղական կառքեր, արաբաններ, որոնց բարձրութիւնից նրանք անխնայ հարուածում էին միմեանց: Դա մի հռետօրական տուրնիր էր, որը յիշեցնում էր միջնադարեան ասպետներին: Դէվիտն, այլ ևս ուժ չունենալով տանել Պարնէլլի ճառի հարուածները, թռաւ իր կառքից ու մի ահաղին մահի ձեռքին զիմեց դէպի Պարնէլլը: Սակայն նա չըհասու իր նպատակին. պարնէլլականները նրա առաջը կտրեցին. հակապարնէլլական ամբօխը յարձակվեց պարնէլլականի վրա. սկսվեց կատաղի փայտէ կռիւ, որը քաղաքի հրապարակից անցաւ փողոցները, ուր տեւեց մի քանի ժամ: Սյոյպիսի վէպքեր 1891 ու 1892 թ. ընթացքում մի քանի անգամ պատահեց Իրլանդիայում:

1891 թ. սկզբներին Ամերիկայից վերադարձան Եւրօպայ իրլանդացի պատգամաւորներ Դիլլօնն ու Օ'Բրիէյնը, որոնք Ամերիկա էին ղնացել հանդանա-
կութիւն անելու յօդուտ Իրլանդիայի սովատանջ
երկրագործներին: Նրանք փորձեցին համաձայնութիւն
կայացնել պարնէլլական ու հակապարնէլլական կու-
սակցութիւնների մէջ, շատ աշխատեցին, անկեղծ
ջանքեր թափեցին, բայց իրանց նպատակին չհասան.
հակապարնէլլական պարադլուսները պահանջում էին
Պարնէլլի հեռացումն ասպարէզից, իսկ նա, կորստա-
բեր գտնելով այդ իրլանդական գործի համար, չէր
կատարում այդ պահանջը, ուստի Դիլլօնի ու Օ'Բրի-
էյնի ջանքերը զուր անցան: Մօսիկ ապագան ցոյց
տուեց, որ իրլանդական գործին պէտք էր, անհրա-
ժեշտ էր Պարնէլլի պէս հանձարեղ ղեկավար, և նա
չըսխալվեց, մինչև իր վերջին շունչը չըթողնելով իր
ձեռքից իրլանդական դրօշակը: 1891 թ. պարլամեն-
տական նստաշրջանի ժամանակ համայնքների ժողո-
վում նա դարձեալ հանդիսանում էր, իբրև իրլան-
դական կուսակցութեան վերագոյն հրամանատար, որի
խրաբանչիւր խօսքը մեծ ուշադրութեամբ էր լսվում
թէ իր և թէ հակառակ բանակում:



Իր բազմաթիւ ճառերի ու հրովարտականների մէջ
Պարնէլլը պիտաւորապէս քննադատում է 1886 թ.
կազմած հոմբուլի նախագիծը և այն հայեացքները,
որ ուներ Գլադստօնը հողային հարցի մասին: Իր
իրլանդացի հակառակորդների վրա, նրանց թոյլ թըշ-

նամինքը համարելով, նա այնքան էլ ուշադրութիւն
չէր դարձնում: Իր ճառերից մինում Մակ-Կարտիի
մասին նա ասաց հետեւեալը. «Մակ-Կարտին մի պատ-
ւական ծերուկ է, որի հետ շատ հաճելի է զրոյց
անել թէյի սեղանի մօտ. բայց նա մի այնպիսի մարդ
է, որի արեան ու ուղեղի մէջ չըկայ պողվատի մի
մսխալ անգամ:» հակապարնէլլականները, իրանց ղե-
կավար ունենալով այդ մարդուն, Պարնէլլի համար
վտանգաւոր հակառակորդներ չէին և, ինչպէս կրտսե-
նենք, ենթարկվում էին նրա բոլոր պահանջներին:
Քննադատելով հոմբուլի նախագիծը, Պարնէլլը հա-
կացնում էր ժողովրդին, որ Գլադստօնն իրան, Պար-
նէլլին, մի քանի կարևոր խոստումներ է արել, որոնք
պաշտօնապէս յայտնի չեն և մնում են գաղանիք իր
և Գլադստօնի մէջ: Եթէ Գլադստօնն այժմս պահան-
ջում է նրա հեռանալը, թող հրապարակով յայտնի
1889 թ. կայացած հաւարդէնի համաձայնութեան
այն կէտերը, որոնք էական փոփոխութիւններ են
մտցնում 1886 թ. պարլամենտին ներկայացրած նա-
խագծի մէջ. բայց այդ Պարնէլլը պահանջում էր,
որ Գլադստօնը պաշտօնապէս խոստանայ իրլանդացի
պատգամաւորներին հոմբուլի ապագայ նախագծի մէջ
մտցնել այդ կէտերը: Գլադստօնը պատասխանեց, որ
նա յարմար չէ գտնում հրատարակել իր նախագիծը,
քանի որ նա ղեռ օրէնագծի ձև չէ ստացել և չէ
առաջարկվել պարլամենտի քննադատութեան: Պար-
նէլլը դրա մէջ վտանգաւոր խաղ տեսնելով, իրա-
ւունք համարեց իր համար օգտել իր տեղեկութիւն-
ներից: Նա ասաց, որ Իրլանդիայի ապագայ ինքնա-
վարութիւնը մի փայլուն օպերային ղեկորացիա

կըլինի ժողովուրդի համար, եթէ իրլանդական պարլամենտն իր իրաւունքի տակ չունենայ երկրի ներքին կարգապահութիւնը ապահովող հիմնարկութիւնները, այսինքն ոստիկանութիւնը, տեղական զօրքը, ժանդարմերիւնն ու դատարանները, առանց որոնց պարլամենտին հպատակվող կատարող իշխանութիւնը մի անգոր մէքենայ կըլինի. բացի այդ հոգային յարաբերութեան վերաբերեալ հարցերն ու օրէնսդրութիւնը պէտք է լիովին ենթարկվին իրլանդական պարլամենտի իրաւասութեան, այլ ոչ թէ ընդհանուր պետականի, որը մինչև այժմն բաւարարութիւն չէ տուել իրլանդացի թշուառ երկրագործներին: Գլադստօնը, Պարնէլլի ասելով, այդ բոլորը խոստացել է տալ Իրլանդիային, և եթէ նա այդ չանի, այն ժամանակ իրլանդական կուսակցութիւնները մեծ յանցանք գործած կըլինեն, եթէ դնան նրա յետևից: Հակապարնէլլականները, տեսնելով, ինչ զօրեղ զէնք ունի Պարնէլլը իր ձեռքում, անմիջապէս բանակցութիւններ սկսեցին Գլադստօնի հետ իմանալու համար նրա հայեացքները: Գլադստօնը պատասխանեց, որ ձշմարիտ է, ինքը առանձին խորհրդակցութիւններ է ունեցել «պատուական ջէնտլմէնի» (Պարնէլլի) հետ, բայց նրա հայեացքները քաղաքական գաղափք չեն եղել իր և Պարնէլլի մօտիկ աշխատակիցների համար: այն, որ այժմն Պարնէլլը պահանջում է, արդիւնք են փոխադարձ զիջումների և համաձայնութեան. նրա, Գլադստօնի, հայեացքներն այժմն էլ նոյնն են, ուրեմն իրլանդացի պատգամաւորները կարող են հանգիստ մնալ ու եռանդով հող պատրաստել ապագայ ընդհանուր ընտրութիւնների համար: Այդպիսով Գլա-


դստօնը կողմնակի կերպով խոստացաւ հոմբուլը ապագայ օրէնսդէրի մէջ մտցնել այն բոլոր կէտերը, որոնց մասին 1889 թ. հաւարդէնում վերջանական համաձայնութիւն էր կայացել Գլադստօնի, Պարնէլլի ու նրանց մօտիկ աշխատակիցների մէջ: Պարնէլլն էլ հէնց այդ էր պահանջում, և նա ընդհանուրի վկայութեամբ փառաւորապէս հասաւ իր նպատակին, կրկին անգամ զգալ տալով իր հակառակորդներին, թէ ինչքան ուժեղ ու հզօր է նա:

1891 թ. ամառը Պարնէլլը Լօնդօնում ամուսնացաւ տիկին Օ'Շիի հետ և դրանով վերջ դրեց այն կեղտոտ լուրերին, որոնք համարեա մի ամբողջ տարի հեղեղի պէս թափվում էին նրա գլխին: Տիկին Օ'Շիի ու Պարնէլլի մէջ գոյութիւն ունեցող յարաբերութիւնները, ինչպէս տեսանք, պատմական մեծ հետեւանքներ ունեցան: Ամուսնանալով նրա հետ, Պարնէլլը նպատակ ունէր աղատել սիրելի կնոջ կեղծ դրութիւնից և օրինաւոր ձև տալ այն վսեմ ընկերական կապերին ու այն մտերմութեան, որոնք վաղուց գոյութիւն ունէին նրանց մէջ: Այդ ամուսնութիւնը չքոտեց Պարնէլլին ոչ հարստութիւն և ոչ նոր կապեր, քանի որ տիկին Օ'Շին ոչ հարուստ էր և ոչ մեծ տան զաւակ: Բայց այդ կինը պատկանում էր այն իրլանդացի կանանց թւին, որոնք ներշնչված հայրենիքի ազդատութեան գաղափարով և ժամանակի առաջադէմ մտքերով, միշտ ոգևորութեան աղբիւր էին ծառայում իրանց ամուսիններին, զրդելով նրանց միշտ զէպի յանդուգն ու համարձակ գործունէութիւն յօգուտ դժբաղդ հայրենիքի: Տիկին Օ'Շիի առաջի ամուսինը չէր այն մարդը, որն ընդունակ լի-

ներ հասկանալ իր կնոջ բարձր ու վսեմ ձգտումները, իսկ երկրորդն էր նա, որի անունով ու գործերով տարիներ շարունակ ոգևորվել են իրլանդացի շատ տիկիներ ու օրիորդներ. այդ երկրորդն էր «Իրլանդիայի անթագակիր թագաւորը», բարդերից փառաբանված «Աստուածընտիր կօնունդը»: Նոյն 1891 թ. ամառը Պարնէլը Գլադստօնի առաջ զրեց մի նոր պահանջ: 1886 թ. հոմբուլի օրէնագիծը առաջարկում էր Իրլանդիային սեփական պարլամենտ տալուց յետոյ Մեծ Բրիտանիայի պարլամենտից հեռացնել իրլանդացի պատգամաւորներին ու նրանց գործութիւնը սահմանափակել Իրլանդիայում բուն իրլանդական գործերով: 1886 թ. Պարնէլը, չըցանկանալով այդ մի կէտի համար զոհել ամբողջ օրէնագիծը ու Գլադստօնի թշնամիների շարքերում մաքառել նրա դէմ, ուղղակի ընդդիմադրութիւն չըցոյց տուեց Գլադստօնին այդ կէտի համար, մնալով առանձին կարծիքի և յոյս ունենալով օրէնագծի երկրորդ ընթերցանութիւնից յետոյ, երբ համայնքների ժողովն սկսում է ներկայացրած օրէնագծի իւրաքանչիւր յօդուածի մանրամասը քննադատութիւնը (կոմիտէտական), առաջարկել Իրլանդիայի պատգամաւորների Մեծ Բրիտանիայի պարլամենտում մնալու հարցը, իբրև յաւելուած Գլադստօնի ներկայացրած օրէնագծի: Բայց որովհետև 1886 թ. հոմբուլի օրէնագիծը երկրորդ ընթերցանութիւնից յետոյ ձայների մեծամասնութեամբ մերժվեց, ուստի Պարնէլը հնարաւորութիւն չունեցաւ առաջարկել իր յաւելուածը: Սյդ հարցն այնուհետև մնաց իր անօրոշ դրութեան մէջ մինչև 1891 թ. ամառը: Իր առաջուայ պա-

հանջներին Պարնէլն աւելացրեց և այդ պահանջը: Իր նախագծած հոմբուլով Գլադստօնը տալու է Իրլանդիային ոչ թէ անպայման անկախութիւն, այլ միայն ներքին աւտօնօմիա, ինքնավարութիւն. Իրլանդիան դարձեալ մնալու է Միացեալ Թագաւորութեան մի խոշոր մասը, և նրա պարլամենտի բոլոր վճիռները պէտք է ենթարկվեն Մեծ Բրիտանիայի թագի զերազոյն բարեհայեցողութեան: Բացի այդ Իրլանդիան որոշ չափով պէտք է մասնակցի ընդհանուր պետական գործերին, ինչպէս արտաքին քաղաքականութեան, պետութեան պաշտպանութեան, աւետարական, անտեսական ու սօցիալական հարցերի լուծման և այլն: Սյդ բոլորը պէտք է ենթարկվեն միշտ ընդհանուր պետական պարլամենտի իշխանութեան, ուստի Իրլանդիան էլ պէտք է մասնակից լինի միշտ այդ պարլամենտի պարագմունքներին իր սեփական պատգամաւորների միջոցով, ինչպէս այժմս այդ գոյութիւն ունի: Զրկել Իրլանդիան այդ իրաւունքից այդ մի և նոյն է տալ անգլիացիների ձեռքը մի սոսկալի զէնք, որով նրանք միշտ կարող են խորտակել Դուբլինի ապագայ պարլամենտն, երբ այդ կրպահանջն Անգլիայի շահերը: Պարնէլը այդ մտքով արտասանած ճառերն այն հետեանքն ունեցան, որ հակապարնէլականները նոր բանակցութիւններ սկսեցին Գլադստօնի հետ, որ խոստացաւ իրլանդացիների այդ պահանջն աչքաթող չանել հոմբուլի ապագայ օրէնագծի մէջ: Դորանով նա ակնարկեց, որ այդ հարցի մասին նա նոյն կարծիքն ունի, ինչ որ յայտնել էր Պարնէլը: Հակապարնէլականներն այդպիսով կրկին անգամ շօշափեցին իրանց նախկին գլխարի առաջ-
հոմբուլի պաշտպանը.

նորդի յոժը, որի խօսքն ու զործը Դամոկլեան սրի պէս միշտ սպառնում էր նրանց անզօր զլուխներին:



Պարնէլլը չէր կարող հաշտվել այդ թոյլ ու անզօյն մարդկանց հետ: Նրանց ղեկավարութիւնը Պարնէլլի կարծիքով վտանգ էր սպառնում Իրլանդիայի ապագային, ուստի նա 1891 թ. աշնան սկզբներէն սկսեց մեծ եռանդով զործել Իրլանդիայում, նպատակ ունենալով հող պատրաստել ապագայ ընդհանուր ընտրութիւնների համար յօդուտ իր կողմնակիցներին: Պարնէլլը այդ տենդային զործունէութիւնը սակայն ողբալի հետեանքներ ունեցաւ. նրա առողջութիւնը քայքայվեց. նրա ֆիզիքական կազմուածքը մի թոյլ կեղև էր նրա երկաթէ կամքի ու վիթխարի հոգու համար: Զղային ցնցումներ յաճախ պատահում էին նրա հետ: Չնայած սիրելի կնոջ խորհուրդներին ու ընկերների խնդրքին, նա մի րոպէ անգամ հանդիստ չէր առնում: «Մինչև իմ վերջին շունչը ես պէտք է զործեմ ու կուեմ. այդ է պահանջում ինձնից Իրլանդիան, նրա ամբողջ անցեալը, ներկան ու ապագան», — լինում էր Պարնէլլի պատասխանը, և նա հաւատարիմ մնաց իր ուխտին, մինչև իր փոթորկալից կեանքի վերջին րոպէն զարմանալի անձնուրացութեամբ ծառայեց նա իր դժբաղդ հայրենիքին, որի անունը մրմնջալով՝ նա աւանդեց իր հոգին: 1891 թ. սեպտեմբերի 20 ին Իրլանդիայի ամենախուլ անկիւններից մինում, շտապելով հալվէյ քաղաքը, ձանապարհին նա ամբողջ գիշերն անցկացրեց սաստիկ

անձրևի տակ, չըցանկանալով յետաձգել հալվէյում նշանակած միտինգը: Նա սաստիկ մրսեց, բայց բոլորովին ուշ չըդարձնելով դրա վրա, եկաւ հալվէյ ու բազմամարդ ժողովը, ուր արտասանեց իր հռչակաւոր ճառերից մինը, որն էր նրա վերջին ճառը: Զղալով հիւանդութեան սաստկութիւնը, նա հալվէյից ուղղակի վերադարձաւ Մնդլիա, ուր Բրայտօն քաղաքում ապրում էր այդ ժամանակ նրա ընտանիքը, տիկին Պարնէլլն իր զուստր օրիորդ ՕՇիի հետ միասին: Պարնէլլը Բրայտօն հասաւ բոլորովին հիւանդ ու ուժասպառ: Թոքերի բորբոքումն ու ջղային ցնցումները նրան անկողին նետեցին, որտեղից նրան չէր վիճակված վեր կենալ կրկին: Հրաւիրված բժիշկներն անզօր գտնվեցան բռնել անողորմ մահի առաջը: Սեպտեմբերի 25-ին, երեկոյեան, տիտանը քնեց յաւիտենական քնով: Իրլանդական ժողովուրդը զրկվեց իր քաջարի ու զիւցաղն զաւակից, իր «անթագալիք թագաւորից», իսկ մարդկութիւնը ազատութեան ու եղբայրասիրութեան մեծ մարտնչողներից մէկից: Մահուան տագնապի ժամանակ Պարնէլլը, երբ զգաց, որ հասել է իր կեանքի վերջին վայրկեանը, լարեց իր բոլոր ոյժերը, բացեց աչքերն ու դարձաւ տիկին Պարնէլլին, ասելով՝ «Յայտնեցէք իրլանդական ազգին ու իմ հաւատարիմ ընկերներին, թէ ինչպիսի անհուն սիրով ես սիրում էին նրանց»: Սյդ ասաց ու, խորը հառաչանք քաշելով, յաւիտեան փակեց աչքերը. վերջին շնչի հետ նրա թոյլ մարմնից անհետացաւ նրա զիւցաղն հոգին:

Պարնէլլի մահուան լուրը կայծակի արագութեամբ տարածվեց ամեն կողմ: Իրլանդիայում անօրինակ

իրարանցում առաջ բերեց նա: Իրլանդական ժողովրդի համար ճակատագրական մի ծանր հարուած էր ազգային հերոսի կորուստը, և նա մեծից սկսած մինչև փոքրը սրտի անկեղծ կսկիծով ողբում էր իր «անթագակիր կօնունգի» եղբրական մահը:

Պարնէլի թաղումը տեղի ունեցաւ հոկտեմբերի սկզբներին Դուբլինում: Բրայտօնից մինչև այդ քաղաքը նրա մնացորդների տեղափոխումը մի կատարեալ յաղթական գնացք էր: Ի նշան իրանց ցաւակցութեան անդլիացիները, հաւատարիմ մնալով իրանց բնածին ջննդամէնութեան, երկաթուղու կայարանները սև էին հագցնում, փողոցները զարդարում էին սև դրօշակներով: Դազաղե վրա անդլիացիները զրեւ էին բազմաթիւ պսակներ, մի լոպէ անգամ չըմտածելով, որ դա այն մարդու դազաղն է, որը կոչում էր միշտ իր հայրենակիցներին՝ «Կոլւ Անդլիայի դէմ: Ալբիօնի նենգաւոր զաւակն է Իրլանդիայի ռիսերիմ թշնամին, մենք պէտք է խորտակենք նրան»: Իրլանդիայի ամբողջ Պարնէլի դիակը հանգիպեց հարիւր հազարի չափ ամբօխ, որը մինչև Դուբլին իր ուսերի վրա տարաւ իր ազգային այն սրբութիւնը, այն հասարակ փայտէ արկղը, որի մէջ ամփոփված էին նրա «անթագակիր թագաւորի» նշխարները: Թաղման օրը ժողովվել էր Դուբլին Իրլանդիայի բոլոր ծայրերից միլլիօնաչափ ամբօխ: Գերեզմանատնում տեղաւորվիլ միայն կարողացան պատգամաւորութիւններն իրանց պսակներով: Դուբլինն ամբողջապէս ծածկված էր սև դրօշակներով ու կտորներով: Պարնէլի դազաղե վրա դրած էր, նրա ցանկութեան համեմատ, որը նա քանիցս անգամ յայտնել էր իր ընկերներին, երեք խօսք՝

«Զարլղ Ստիւարտ Պարնէլլ» Թաղման հանդէսը վերջացաւ ուշ երեկոյեան: Ծէսը կատարում էր բողոքական հոգևորականութիւնը. Պարնէլլը բողոքական էր: Երբ դազաղն իջեցրին դերեզման, մնայլ ամպերի տակից դուրս լողաց լուսինը. մոմերը հանգան. քահանան կարգաց իր վերջին աղօթքը. երգեցողութեան տխուր մեղեդին խառնվեց ժողովրդի բարձրաձայն լայի հետ: Նա ողբում էր իր հերոսի, իր դիւցազն զաւակի անդառնալի կորուստը: Այդ սրտաշարժ տեսարանով վերջացաւ տխուր հանդէսը: Ամբօխը ցրվեց, տանելով իր հետ մի-մի հատ այն սղի դրօշակները, որոնցով զարդարված էր Դուբլինը: Այդ դրօշակների վրա դրված էին Պարնէլի չալվէյում արտասանած ճառի վերջին խօսքերը. «Եւ երբ կըհասնի ժամը թողնել ինձ այս փոթորկալից աշխարհը, իմ սկսած գործը չի մեռնիլ, իմ յարուցած կռիւր չի ընդհատվիլ: Նրանք, որոնք այնպիսի անձնութեամբ առաջ են ընթանում իմ ցոյց տուած շաւղով, նրանք, որոնք տարիների ընթացքում արեան ու կրակի մէջով անցել են իմ ետեւից, անվեհեր քաջութեամբ կըշարունակեն այդ սուրբ գործը, որովհետեւ իմ զազափարները ձուլվել են նրանց ու համայն իրլանդական ազգի ամբողջութեան հետ:» Մարդկութեան մեծ առաջնորդներին այդ միտքն է ոգևորում ու մխիթարում միշտ. նրանք գործում են, մի լոպէ անգամ չըյուսահատվելով. նրանք զիտեն, որ ամեն լոպէ մահն անողորմ կարող է դուրս խլել նրանց կենդանի մարդկանց շարքերից, բայց այն համոզմունքը, որ իրանցից յետոյ կենդանի կըմնան իրանց քաղաքացիական գաղափարները, որ իրանց փայփայած ու

պաշտած իդէալները կը շարունակեն ոգևորել նորանոր սերունդներ, — նոր ոյժեր ու ողի են ներշնչում նրանց, ամբայնում են նրանց կամքն ու եռանդը, որոնք չեն թուլանում մինչև նրանց վերջին շունչը:

Պարնէլլի մահը բնականաբար մեծ նիւթ տուեց լրագիրներին: «Times» և «Daily News» յայտնեցին հետեւեալ կարծիքները. առաջինն ասաց՝ «Պարնէլլին անմահացրեց իր անունը մարդկային պատմութեան էջերում: Եանձին նրա՝ պերեզման իջաւ տասն և իններորդ դարի ամենամեծ մարդկանցից մինը. նա ուժեղ էր ու անվեհեր, ինչպէս առիւծ, յանդուգն էր, համարձակ ու անդուսպ, ինչպէս վազր:» Երկրորդն ասաց՝ «Պարնէլլը մի անզուգական վեթխարի էր. նա մեն-մենակ կռիւ սկսեց անդլիական պարլամենտի դէմ և վերջը յաղթեց ընտրեալների այդ ժողովարանը ու մինչև անգամ հնազանդեցրեց իրան:» Այդ յաղթութիւնը հսկաներին է միայն մատչելի:



Պարնէլլի մահից յետոյ հակապարնէլլականների ու պարնէլլականների մէջ փոխադարձ առեւտրութիւնն ու կռիւը աւելի զօրեղացան: Այդ շատ ձեռնտու էր կառավարութեան և շատ փնասակար իրլանդական գործին. դա զլիսաւորապէս երկարացրեց արդէն մերձիմահ կառավարութեան օրերը, որն իր գոյութիւնը հնարաւորութիւն ունեցաւ, շնորհիւ այդ հանգամանքների, մինչև 1892 թ. ամառը շարունակել դեռ: Յոյս ունենալով օգտուել համրուականների ներքին երկպառակութիւններին ու կրկին պարլամենտական


մեծամասնութիւն ձեռք բերել լօրդ Սալիսբիւրին 1892 թ. յունիսին լուծեց համայնքների ժողովն ու նշանակեց ընդհանուր ընտրութիւններ: Թէ ազատամիտ և թէ իրլանդական կուսակցութիւնները, տեսնելով ինչ վտանգ է սպառնում ընդհանուր գործին, հոմրուլին, թողեցին իրանց երկպառակութիւններն ու համախմբեցին Գլադստօնի դրօշակի տակ: Հոմրուլականները յաղթող հանդիսացան: Սալիսբիւրիի պահպանողական կառավարութիւնն ստիպված եղաւ հրաժարական տալ: Կաղմակերպեց նոր ազատամիտ կառավարութիւն «Մեծ Ծերունու» ղեկավարութեամբ: Այդ կառավարութեան ամենագլխաւոր նպատակ էր՝ բաւարարութիւն տալ Իրլանդիային, կատարել նրա բաղմնաչարքար ժողովրդի իղձերը: Ամենքը, թէ իրլանդացիք և թէ անգլիացիք, սրտատրոփ սպասում էին այն րոպէին, երբ Գլադստօնը կանի այդ նշանաւոր քայլը:

1893 թ. փետրվարի 1-ին ազատութեան, արդարութեան ու մարդասիրութեան մեծ պաշտպանը, Գլադստօնը, համայնքների ժողովին առաջարկեց վերջապէս իր հռչակաւոր հոմրուլ բխլլը, որով նա կատարեալ ներքին ինքնավարութիւն էր տալիս Իրլանդիային: Վերջինս ստանում էր այն բոլորը, ինչ որ Գլադստօնը խոստացել էր Պարնէլլին: Պահպանողական կուսակցութիւնը սարսափելի ընդիմադրութիւն ցոյց տուեց Գլադստօնի օրէնագծին: Նրա դէմ կաղմակերպվում էին մինչև անգամ միախնդներ, որոնք իրանց բողոքագրերով հեղեղում էին պարլամենտը: Համայնքների ժողովն ամբողջ վեց ամիս ղեաղվեց այդ հարցով: Վիճաբանութիւնները երբեմն շարունակ-

վում էին օրեր ու գիշերներ անընդհատ: Գլադստոնը լարեց իր հանձարի բոլոր ուժերը համրուլն ընդունել տալու համար: Նրա բոլոր կողմնակիցները մինչև վերջը հաւատարիմ մնացին նրան: Յուլիսի վերջերին երրորդ ընթերցանութիւնից յետոյ ձայների մեծամասնութեամբ համայնքների ժողովն ընդունեց հոմբուլը, որն անմիջապէս անցաւ լորդերի պալատը: Վերջինս, բաղկացած լինելով պահպանողական ստուար մեծամասնութիւնից, Սալիսբիւրիի առաջարկութեամբ երկրորդ ընթերցանութիւնից յետոյ մերժեց հոմբուլը, և այդպիսով Գլադստոնի այդ մարդասէր օրէնսդիրը մտաւ ժամանակաւորապէս դերեզման, որտեղից նա վաղ-ուշ յարութիւն է առնելու: Լորդերի այդ յանդուգն քայլը բնականաբար հարց բարձրացրեց նրանց իրաւունքների սահմանափակման մասին: Պէտք էր անգլիական ժողովրդին հասկացնել, որ երկրի ընդհանուր առաջադիմութեան համար անհրաժեշտ է սահմանափակել լորդերի ժողովի իրաւունքները: Գլադստոնն սկսեց գործել այդ ուղղութեամբ, և նա անշուշտ կը հասնէր իր նպատակին, եթէ զառամեալ հասակը ներէր այդ վիթխարուն մի քանի տարի ևս իր հզօր ձեռքերում պահել Մեծ Բրիտանիայի կառավարութեան ղեկը: Սակայն ժամանակը կարգաց Գլադստոնի գլխին իր սոսկալի դատավճիռը. 85-ամեայ հասակը, աչքերի ցաւը, լսողութեան և առհասարակ ֆիզիքական ուժերի արագ նուազումն ստիպեցին նրան թողնել գործերի ղեկավարութիւնը ու հեռանալ քաղաքական ասպարէզից: Ազատամիտ կառավարութեան ղեկն անցաւ լորդ Բոլբերիի ձեռքը: Նրան ու իր միւս կողմնակիցներին

Գլադստոնն իր հրաժեշտի ճառի մէջ, որը նա արտասանեց համայնքների ժողովում, կտակեց հաւատարիմ մնալ միշտ ազատամիտ կուսակցութեան դաւանած սկզբունքներին, բարձր պահել նրա դրօշակը և լուրջ ուշադրութիւն դարձնել այն երեւոյթների վրա, որոնք վերջին տարիներս սպառնում են տապալել առաջադիմութեան գործը: Գլադստոնի վերջին խօսքերը վերաբերվում էին լորդերի ժողովին, որի արմատական վերանորոգման կամ ոչնչացման վճիռը կրտայ ինքը ժողովուրդը, երբ նա ի մօտոյ կը ծանօթանայ հարցի հետ ու կը ճանաչի իր իսկական թշնամիներին ու բարեկամներին: «Ազատամիտ կուսակցութիւնը, — ասաց իր ճառի վերջում Գլադստոնը, — պարտաւոր է բանալ ժողովրդի աչքերը ու այդպիսով փրկել սահմանադրական մեքենայի կանոնաւոր ու բարերար գործունէութիւնը, որը արդիւնք է անթիւ սերունդների բաղմնաշարքը ու անձնուէր աշխատանքի:» Բողբերիի կառավարութիւնն իր գոյութիւնը շարունակեց մինչև 1895 թ. ամառը: Ծնորհիւ արեւելքում տեղի ունեցած յայտնի դէպքերի՝ բոլոր ժամանակ զբաղված լինելով արտաքին քաղաքականութեամբ, նա Իրլանդիայի համար ոչինչ չեկարողացաւ անել: 1895 թ. ընդհանուր ընտրութիւնները տուին պարլամենտին պահպանողական անդամների ահագին մեծամասնութիւն: Բողբերին ստիպված եղաւ թողնել կառավարութեան ղեկը, որն անցաւ պահպանողական լորդ Սալիսբիւրիի ձեռքը: Հոմբուլն օխերիմ թշնամին այդպիսով կրկին անցաւ կառավարութեան ղեկը: Նրա օրով Իրլանդիան չի ստանալ Անգլիայից հոմբուլ, բայց նա վաղ-ուշ յաղթանակը

կրտանի. նրան սպասում է փայլուն ու երջանիկ
 ապագայ, քանի որ նա ծնել է Օհսնէլի ու Պար-
 նէլլի պէս զաւակներ և զարձեալ կրծնի: Այդ զիտն
 բոլոր անգլիացիները, Ալբիօնի զաւակները շատ լա-
 են յիշում պատմութեան դասերը, ուստի վաղ-ուշ
 նրանք զինաթափ կրլինեն, և Իրլանդիան մի գեղեցիկ
 օր իրադործված կըտեսնի իր իղձերը:



2013

